ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏ
ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 59 (Սխեմա Բ—7)
3 նոյեմբերի 1938 թ.

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈՒՊՈՆՆԵՐԸ, ՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1939

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏ
ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԿՈՒՊՈՆՆԵՐԸ, ՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՅԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

№ 59 (Սխեմա Բ—7)
3 նոյեմբերի 1938 թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

II-28344գ

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ԿՈՒՊՈՆՆԵՐԸ, ՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՑԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### ԿՈՒՊՈՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՑԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. *Խնայողական դրամարկղները պարտավոր են ապահովել այն, որ պետական փոխառությունների շահումներն ու տոկոսները և այն պարտատոմսերը, որոնց հետգնման ժամկետը հասել է, ժամանակին վճարվեն բնակչությանը:*

*Այդ նպատակով՝ խնայողական դրամարկղները պետք է՝*

*ա) Պետական փոխառությունների շահումների յուրաքանչյուր առաջիկա խաղարկությունների և կուպոնների վճարման ժամկետները լրանալու մասին լայնորեն տեղեկություն տան բնակչությանը՝ լրագրերի ռադիոյի միջոցով, ժողովներում, հատուկ պլակատներ բաց թողնելու միջոցով և այլն:*

*բ) Պետական վարկին և խնայողական գործին օժանդակող հանձնաժողովներին ձեռնարկություններում, հիմնարկություններում և գյուղական խորհուրդներում մատակարարել Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչությունից ստացվող շահումների աղյուսակներով:*

*գ) Պայմանավորվելով լրագրների խմբագրությունների հետ՝ շահումների տեղեկատու աղյուսակները զետեղել տեղական թերթերում, սխալներից խուսափելու համար մանրազննին կերպով ստուգելով հրապարակվող աղյուսակները:*

*դ) Ձեռնարկություններում, հիմնարկություններում, գյուղական խորհուրդներում, ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում և կարմիր անկյուններում կազմակերպել շահումների մասին տեղեկանքներ տվող տեղեկատու սեղաններ, ապահովելով այդ տեղեկատու սեղանների կանոնավոր աշխատանքը և նրանց սպասարկումը օժհանձնաժողովների ակտիվիստների կողմից:*

*ե) Շահումների աղյուսակները կախել խնայողական դրամարկղի շենքում, անարգել կերպով աղյուսակներ տալ պարտատոմսատերերին՝ իրենց պարտատոմսերը խնայողական դրամարկղում ստուգելու համար, նաև պարտատոմսատերերի ցանկությամբ՝ ստուգել պարտատոմսերը խնայդրամարկղի աշխատողների ուժերով:*

2. *Այս հրահանգի 4-րդ կետում նշված պետական փոխառությունների պարտատոմսերի շահումները վճարում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները*

և 1-ին ու 2-րդ կարգի խնայդրամարկղները։

2-րդ կարգի խնայողական դրամարկղները վճարում են 200 ռուբլուց վոչ բարձր շահումները՝ փոխառությամբ սահմանված հիմնական արժողություն ունեցող պարտատոմսերի համար, այդ շահումների մասերը— հիմնականից ցածր արժողություն ունեցող պարտատոմսերի համար, նաև այդ չափերի յերկու, յերեք կամ հինգ շահումներ, վորոնք միաժամանակ ընկել են 200, 300 և 500 ռուբլի արժողություն ունեցող պարտատոմսերին։

1-ին կարգի ու կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները շահումները վճարում են 500 ռուբլուց վոչ ավելի չափով՝ փոխառությամբ սահմանված հիմնական արժողություն ունեցող պարտատոմսերի համար, այդ շահումների մասերը— հիմնականից ցածր արժողություն ունեցող պարտատոմսերի համար, նաև 500 ռ. շահումները, վորոնք ընկել են 200, 300 և 500 ռ. արժողություն ունեցող պարտատոմսերի համարներից վորևե մեկին, այդ պարտատոմսերի մնացած համարներից յուրաքանչյուրի շահումների հետ միաժամանակ։

500 ռուբլուց բարձր շահումները, վորոնք ընկել են ինչպես հիմնական արժողություն ունեցող պարտատոմսերին, այնպես էլ հիմնականից բարձր արժողություն ունեցող պարտատոմսերին, նաև այդ շահումների մասերը վճարում է Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչությունը՝ պարտատոմսերի էքսպերտիզայից հետո։

Այդպիսի շահումներ ունեցող պարտատոմսերը էքսպերտիզայի համար Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր Վարչությանն ուղարկելու նպատակով՝ ընդունում են պարտատոմսատերերից միմիայն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները։

Պարտատոմսերի առաքումը կատարվում է խնայողական դրամարկղի հաշվին։

Այդ պարտատոմսերի շահումների գումարները Գլխավոր Վարչությունն ուղարկում է կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներին՝ վորոնք շահումները հանձնում են պարտատոմսատերերին։

Ծանոթություն: Առանձին պետական փոխառությունների հիմնական արժողություն ունեցող պարտատոմսերը նշված են այս հրահանգի 8-րդ կետում։

3. Կտրոններն ու մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը վճարում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները և 1-ին ու 2-րդ կարգի խնայողական դրամարկղներն առանց գումարի սահմանափակման և անկախ կտրոնների ու պարտատոմսերի արժողությունից— բացառությամբ այս հրահանգի 4-րդ կետում նշվածներից։

4. Յերկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառության, ԽՍՀ Միության Պաշտպանության Ամրացման փոխառության և Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա բաժնի) փոխառության շահումներն ու կտրոններն այն չափով, վորպեսիք նշված են այս հրահանգի 2-րդ և 3-րդ կետերում, վճարում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները և բոլոր 1-ին ու 2-րդ կարգի խնայողական դրամարկղները։

1938 թ. Պետական Ներքին Շահող Փոխառության պարտատոմսերի շահումներն այն չափով, վորը նշված է այս հրահանգի 2-րդ կետում, վճարում են միայն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները, նաև 1-ին կարգի առանձին խնայողական դրամարկղները, վորոնց՝ Պետաշխխնայդրամարկղների և Պետվարկի վերադաս Վարչությունը թույլատրել է կատարելու այդ գործառնությունները։ Այդ նույն



խնայողական դրամարկղները մինչև 1939 թ. մարտի 1-ը վճարում են 1929, 1930, 1932 և 1935 թ. թ. պետական փոխառությունների կտրոններն ու շահումները՝ այս հրահանգի 2-րդ կետում նշված չափերով։

1929 թ. 1-ին 6 տոկոս. շահող փոխառության, 1924 թ. 2-րդ 6 տոկոս. շահող փոխառության, 1926 թ. անտոկոս շահող փոխառության, 1927 թ. 3-րդ 6 տոկոս. գյուղացիական փոխառության, 1927 թ. 10 տոկոս. շահող փոխառության, 1927 թ. 12— տոկոս. ներքին փոխառության, ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ինդուստրացման 1-ին փոխառության (1927 թ.), ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ինդուստրացման 2-րդ փոխառության (1928 թ.), գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության (1928 թ.), 1928 թ. 11 տոկոս. ներքին փոխառության, նաև Մոսկվայի Խորհրդի փոխառության և գյուղատնտեսության տրակտորիզացիային ոժանդակող փոխառության շահումները, կտրոնները և պարտատոմսերը մինչև այդ փոխառությունների թողարկման մասին յեղած որենքներով հաստատված վճարման վերջին ժամկետներն անցնելը՝ վճարում են միմիայն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները։

1927 թ. 12 տոկոս. ներքին փոխառության և 1928 թ. 11—տոկոս. ներքին փոխառության 50, 100 և 500 ռ. արժողություն ունեցող պարտատոմսերը մինչև սահմանված վերջին ժամկետներն անցնելը (հրահանգի 8 կետը) վճարում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները։ Այդ փոխառությունների 5000 ռ. արժողությամբ պարտատոմսերը վճարում է պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր Վարչությունը, ուր պարտատոմսերը պարտատոմսատերերի հանձնարարությամբ ուղարկում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները։

5. Խնայողական դրամարկղները շահումներն ու մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը վճարում են պաշտոնական աղյուսակներով, վորոնք հրապարակվում են «Правда», «Известия Советов Депутатов трудящихся СССР», «Финансовая газета» թերթերում և այն տեղի թերթում, վորտեղ կատարվում է շահումների խաղարկությունը, նաև պետաշխխնայդրամարկղների ու պետվարկի Գլխավոր Վարչության կողմից հրատարակվող պաշտոնական աղյուսակներով։

Խնայողական դրամարկղները շահումներն սկսում են վճարել այն լրագրի հետևյալ հերթական համարն ստանալուց հետո, վորում հրատարակված է շահումների աղյուսակը։ Այդ լրագրի հերթական համարում հրապարակվում են վրիպակների ուղղումները, յեթե այդպիսիք յեղել են աղյուսակում։

6. Շահումների խաղարկությունների աղյուսակներում նշված չափերով յեղած շահումները վճարվում են փոխառության որենքով սահմանված (կետ 8-րդ) հիմնական արժողություն ունեցող պարտատոմսեր ներկայացնողներին։ Հիմնականից ցածր արժողությամբ պարտատոմսեր ներկայացնողներին վճարվում է շահումների աղյուսակում նշված շահումի համապատասխան մասը։

Հիմնականից բարձր արժողությամբ պարտատոմսեր ներկայացնողներին վճարվում է, համաձայն աղյուսակի, համապատասխանաբար յերկու կամ մի քանի շահումներ՝ ըստ պարտատոմսի վրա յեղած յուրաքանչյուր առանձին համարի։

Դրան համապատասխան՝ Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառության, ԽՍՀ Միության Պաշտպանության Ամրացման փոխառության և Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա) փոխառության շահած պարտատոմսերի համար վճարվում են հետևյալ գումարները։

| Շահումի չափը հարյուր ռուբլիանոց պարտատոմսի համար | Վճարվում է ստորև նշված արժողություն ունեցող պարտատոմսի համար | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 500 ռուբլիանոց | 300 ռուբլ. | 200 ռուբլ. | 100 ռուբլ. | 50 ռուբլ. | 25 ռուբլ. | 10 ռուբլ. |
| 3000 ռուբ. | 3600 ռ. | 3300 ռ. | 3150 ռ. | 3000 ռ. | 1500 ռ | 750 ռ. | 300 ռ. |
| 1000 » | 1600 » | 1300 » | 1150 » | 1000 » | 500 » | 250 » | 100 » |
| 500 » | 1100 » | 800 » | 650 » | 500 » | 250 » | 125 » | 50 » |
| 200 » | 1000 » | 600 » | 400 » | 200 » | 100 » | 50 » | 20 » |
| 150 » | 750 » | 450 » | 300 » | 150 » | 75 » | 37 ռ. 50 կ. | 15 » |

7. Մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը խնայողական դրամարկղները վճարում են այդ պարտատոմսերի վճարման ժամկետները հասնելուն պես, վորոնք սահմանված են փոխառության թողարկման որենքներով և նշված են մարման խաղարկությունների աղյուսակներում:

Պետական փոխառությունների պարտատոմսերի կուպոնները վճարվում են կտրոնների վրա նշված ժամկետները հասնելուն՝ պես:

8. Շահումները, կուպոնները և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը վճարվում են այն ժամկետների ընթացքում, վորոնք սահմանված են յուրաքանչյուր փոխառության որենքներով, այսինքն՝

| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կուպոնների վճարման ժամկետները | Մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման ժամկետները | Շահումների վճարման ժամկետները |
|---|---|---|---|
| 1922 թվի առաջին 6 տոկոս. շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 5 ռ.) | 10 տարվա ընթացքում՝ բռկրված կուպոնի ժամկետի վերահասման սրից | 10 տարվա ընթացքում՝ մարման խաղարկությունից հետո: Մարման խաղարկությունով չանցած պարտատոմսերը հետ են գնվում 1932 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1942 թ. դեկտեմբերի 1-ը: | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության ավարտման որից: |
| 1924 թվի յերկրորդ 6 տոկոս. շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 5 ռ.) | 10 տարվա ընթացքում՝ ըսկրված կուպոնի ժամկետի վերահասման որից: | 10 տարվա ընթացքում՝ մարման խաղարկությունից հետո: Մարման խաղարկությունով չանցած պարտատոմսերը հետ են գնվում 1929 թ. մարտի 15-ից մինչև 1939 թ. մարտի 15-ը. | 10 տարվա ընթացքում՝ սկսած շահումների համապատասխան խաղարկության ավարտման որից: |



| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կուպոնների վճարման ժամկետները | Մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման ժամկետները | Շահումների վճարման ժամկետները |
|---|---|---|---|
| 1926 թվի անտոկոս շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 100 ռ.) | — | — | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության որից: |
| 1927 թ. յերրորդ 6-տոկոս. գյուղացիական փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 5 ռ.) | 10 տարվա ընթացքում՝ սկսած կուպոնի ժամկետի վերահասման որից: | Պարտատոմսերը հետ են գնվում 1930 թ. ապրիլի 1-ից մինչև 1940 թ. ապրիլի 1-ը: | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության որից: |
| 1927 թ. 10-տոկոս. շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 25 ռ.) | 10 տարվա ընթացքում՝ սկսած կուպոնի ժամկետի վերահասման որից: | 10 տարվա ընթացքում՝ խաղարկությունից հետո: Մարման խաղարկությունով չանցած պարտատոմսերը հետ են գնվում 1935 թ. մարտի 1-ից մինչև 1945 թ. մարտի 1-ը: | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության որից: |
| 1927 թ. 12 տոկոս. ներքին փոխառություն: | 3 տարվա ընթացքում՝ ըսկրսած կուպոնի ժամկետի վերահասման որից | 3 տարվա ընթացքում՝ մարման համապատասխան խաղարկությունից հետո: Մարման խաղարկությունով չանցած պարտատոմսերը հետ են գնվում 1937 թ. հունիսի 1-ից մինչև 1940 թ. հունիսի 1-ը: | — |
| 1927 թ. ինդուստրացման առաջին 6 տոկոս. փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 25 ռ.) | 10 տարվա ընթացքում՝ սկսած կուպոնի ժամկետի վերահասման որից: № 7-ից մինչև № 20-ը կուպոնները, փոխառությունը 1930 թ. փոխանակելու կապակցությամբ վոչնչացված են և վճարման յենթակա չեն | — | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության որից: |

| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կուպոնների վճարման ժամկետները | Մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման ժամկետները | Շահումների վճարման ժամկետները |
|---|---|---|---|
| 1928 թ. ինդուստրացման երկրորդ 6-տոկոս. փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 25 ռ): | 10 տարվա ընթացքում՝ սկսած կուպոնի ժամկետի վերահասման օրից։ № 3-ից մինչև № 10-ը կուպոնները, փոխառությունը 1930 թ. փոխանակելու կապակցությամբ, վոչնչացված են և վճարման ենթակա չեն։ | — | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության օրից։ |
| Գյուղացիական տնտեսության ամրացման փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 10 ռ). | Մինչև 1941 թ. փետրվարի 1-ը | — | Մինչև 1941 թ. փետրվարի 1-ը։ |
| 1928 թ. 11 տոկոս. ներքին փոխառություն | Մինչև 1948 թ. սեպտեմբերի 1-ը։ | Մինչև 1948 թ. սեպտեմբերի 1-ը։ | — |
| Մոսկվայի Խորհրդի փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 25 ռ). | — | 10 տարվա ընթացքում՝ սկսած մարման խաղարկության օրից։ | 10 տարվա ընթացքում՝ սկսած շահումների խաղարկության օրից |
| 1929 թ. անտոկոս-շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը-100 ռ.) | — | — | Մինչև 1939 թ. մարտի 1-ը։ |
| Գյուղատնտեսության տրակտորիզացիային օժանդակող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը-5 ռ.) | — | 10 տարվա ընթացքում՝ փոխառության հետ գնումն սկսելու օրից, այսինքն՝ մինչև 1943 թ. փետրվարի 15-ը։ | 10 տարվա ընթացքում սկսած շահումների համապատասխան խաղարկության օրից։ |



| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կուպոնների վճարման ժամկետները | Մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման ժամկետները | Շահումների վճարման ժամկետները |
|---|---|---|---|
| 1930 թվի 9 տոկոս շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը-50 ռ.) | №№ 1—16 կուպոններն իրենց ամբողջ արժեքով և № 17 կուպոնն իր արժեքի 2/3 չափով վըճարվում են մինչև 1939 թ. մարտի 1-ը մնացած կուպոնները, կոնվերսիայի կապակցությամբ, վոչնչացված են և վճարման ենթակա չեն։ | — | Մինչև 1939 թվի մարտի 1-ը։ |
| 1932 թ. ճանտոկոս շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը-100 ռ.) | — | — | Մինչև 1939 թվի մարտի 1-ը։ |
| 1935 թվի անտոկոս շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը—100 ռ.) | — | — | Մինչև 1939 թվի մարտի 1-ը. |
| Երկրորդ Հնգամյակի (4-րդ տարվա) փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը-100 ռ.) | Մինչև 1957 թ. սեպտեմբերի 1-ը. | Մինչև 1957 թ. սեպտեմբերի 1-ը։ | Մինչև 1957 թ. սեպտեմբերի 1-ը։ |
| ԽՍՀ Միության Պաշտպանության Ամրացման փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը-100 ռ): | Մինչև 1958 թ. դեկտեմբերի 1-ը։ | Մինչև 1958 թ. դեկտեմբերի 1-ը. | Մինչև 1958 թ. դեկտեմբերի 1-ը։ |
| 1938 թ. Շահող փոխառություն (հիմնական արժողության պարտատոմսը 200 ռ.) | — | Մինչև 1959 թ. հունիսի 1-ը։ | Մինչև 1959 թ. հունիսի 1-ը։ |

| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կտրոնների վճարման ժամկետները | Մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման ժամկետները | Շահումների վճարման ժամկետները |
| --- | --- | --- | --- |
| Յերրորդ 5-ամյակի (առաջին տարվա) փոխառության հիմնական արժողության պարտատոմսը -100 ռուբլի): | Մինչև 1959 թ. դեկտեմբերի 1-ը: | Մինչև 1959 թ. դեկտեմբերի 1-ը: | Մինչև 1959 թ. դեկտեմբերի 1-ը: |

Ծանոթություն: 1. Այս հոդվածում չթվարկված փոխառությունների կտրոնները, շահումները և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը խնայողական դրամարկղները չեն վճարում:

2. 8 տոկոս. ներքին փոխառությունների կտրոններից և մարման խաղարկություններով անցած պարտատոմսերի վճարման գործառնությունները կատարում են միայն կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները՝ այդ գործառնությունները կատարելու կարգի մասին յեղած պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության հատուկ ցուցմունքների հիման վրա:

9. Ըստ 1922 թ. 6 տոկոս. շահող փոխառության, 1924 թ. յերկրորդ 6 տոկոս. շահող փոխառության և 1927 թ. Յերրորդ գյուղացիական փոխառության պայմանների՝ այդ փոխառությունների պարտատոմսերին շահումներ ընկնելու ժամանակ այդպիսիք չեյին մարվում, այլ մնում եյին իրենց տերերի մոտ և շարունակում եյին մասնակցել շահումների հետագա խաղարկություններին՝ մինչև նրանց մարման խաղարկությունով դուրս գալը: Հետևապես՝ այդ փոխառությունների առանձին պարտատոմսերին կարող են ընկնել միքանի շահումներ: Այդպիսի պարտատոմսերով վճարման յենթակա յեն բոլոր շահումները, վորոնք ընկել են պարտատոմսին և չեն ստացվել նրա տիրոջ կողմից, յեթե պարտատոմսերի վրա չկա շտամպ այն մասին, վոր շահումի վճարումը կատարված է նախկինում:

1927 թվի Յերրորդ գյուղացիական փոխառության շահումները վճարվում են պարտատոմսերից չբաժանված հսկիչ կտրոնների առկայության դեպքում, կտրոններ, վորոնք ունեն այն խաղարկությունների համարները, վորոնցում շահումներ են ընկել պարտատոմսին:

10. 1926 թ. շահող փոխառության, 1932 թ. շահող փոխառության, 1935 թ. շահող փոխառության, Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառության, ԽՍՀ Միության Պաշտպանության Ամրացման փոխառության, 1938 թ. շահող փոխառության և Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա) փոխառության շահած պարտատոմսերով՝ շահումի գումարի մեջ մտնում է շահած պարտատոմսի անվանական արժեքը:

11. 1927 թ. 10 տոկոս փոխառության, 1927 թ. Ինդուստրացման Առաջին փոխառության, 1928 թ. Ինդուստրացման Յերկրորդ փոխառության, գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության, 1929 թ. անտոկոս-շահող փոխառության, Մոսկվայի խորհրդի փոխառության, գյուղատնտեսության տրակտորիզացիային ոժանդակող փոխառության և 1930 թ. 9 տոկոս. փոխառության շահած պարտատոմսերով վճարվում է, բացի շահումից, նաև պարտատոմսերի անվանական արժեքը:

12. Տոկոսաբեր-շահող փոխառությունների և խաղարկումների շահած պարտատոմսերով, բացի շահումի գումարից, վճարվում են նաև կտրոններով յեղած տոկոսները, վորպիսիք աճել են մինչև խաղարկության որը՝ շահումների աղյուսակում նշված գումարով: Պակասող կտրոնների արժեքը, վորոնց վճարման ժամկետը հասել է շահումների խաղարկությունից հետո, պահվում է պարտատոմսը ներկայացնողին վճարվող գումարից: Կոնվերսիաների կապակցությամբ վոչնչացված կտրոնների արժեքը (Ինդուստրացման Առաջին փոխառության պարտատոմսերի №№ 7—20 կտրոնները, Ինդուստրացման Յերկրորդ փոխառության պարտատոմսերի №№ 3—10 կտրոնները և 1930 թ. 9 տոկոսային շահող փոխառության պարտատոմսերի №№ 18—20 կտրոնները). շահումների վճարման ժամանակ չի գանձվում:

Գյուղացիական տնտեսության Ամրապնդման Փոխառության շահած պարտատոմսերով վճարվում են (մինչև 1941 թ. փետրվարի 1-ը) պարտատոմսերին կցված բոլոր կտրոնները՝ անկախ շահումների խաղարկության անցկացման ժամկետից:

13. Տոկոսաբեր փոխառությունների պարտատոմսերը, վորոնք անցել են մարման խաղարկությունով, պետք է իրենց կից ունենան այն բոլոր կտրոնները, վորոնց ժամկետները լրանում են այդ պարտատոմսերի վճարումն սկսելու համար սահմանված ժամկետից հետո: Կտրոնների բացակայության դեպքում՝ նրանց արժեքը գանձվում է պարտատոմսերի արժեքից:

14. Կտրոնները, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը խնայողական դրամարկղները վճարում են միայն այն պայմանով, յեթե պարտատոմսերն ու կտրոնները պահպանել են վճարելության հետևյալ հատկանիշները.

ա) Յեթե պարտատոմսերը կամ կտրոնները չունեն կեղծումների և ուղղումների հետքեր, նաև չունեն ծակած նշաններ, մարման շտամպներ կամ նախկինում կատարված վճարման այլ հետքեր:

բ) Յեթե պարտատոմսերի առաջին յերսին բառերով նշանակված անվանական արժեքը և կտրոնների վրա թվանշաններով նշանակված արժեքն անվնաս են.

գ) յեթե պարտատոմսերի և կտրոնների վրա պահպանվել են փոխառության և մասի նշանակված անվանումը.

դ) յեթե պարտատոմսերի վրա պահպանվել են պարտատոմսերի համարների և սերիաների համարների անվնաս տպվածքը, իսկ կտրոնների վրա— վճարման ժամկետը կամ հերթական համարը.

ե) յեթե պարտատոմսերը կամ կտրոնները մասերից չեն բաղկացած, թեկուզ և իրար կպցրած:

15. Պարտատոմսերի աննշան վնասվածքները, վորի ժամանակ վճարելիության հատկանիշները չեն խախտված, արգելք չեն հանդիսանում այդ պարտատոմսերը վճարելու համար:

Մասնավորապես, խնայողական դրամարկղներն անարգել կերպով ընդունում են վճարման համար հետևյալ վնասված պարտատոմսերը, յեթե այդ պարտատոմսերը պահպանել են վճարելիության բոլոր հատկանիշները.

ա) պարտատոմսեր, վորոնք ճղվածքները (պատռվածքներ) ունեն, բայց չեն վնասել պարտատոմսերի համարներն ու սերիաները կամ վճարելիության այլ հատկանիշները, յեթե ճղվածքը (պատռվածքը) լրիվ չափով չի բաժանել պարտատոմսը յերկու կամ մի քանի մասերի, թե-

կուզ այդ մասերը հետագայում կըպցըված լինեն։

բ) Պարտատոմսեր, վորոնք ունեն աննշան վնասվածքներ (անկյունները կտրված են կամ այրված և այլն)։

16. Այն պարտատոմսերն ու կուպոնները, վորոնք բաժանված են մասերի (կտրված կամ ճղված են միջից) թեկուզ և հետագայում կպցըրած) ընդունվում են խնայողական դրամարկղների կողմից՝ էքսպերտիզայի համար պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանն ուղարկելու համար՝ այս հրահանգի 17-րդ հոդվածում մատնանշված կարգով։

17. Այն պարտատոմսերն ու կուպոնները, վորոնք կասկածներ են հարուցում իրենց վճարելիության մեջ, պետք է, իրենց տերերի համաձայնությամբ, ընդունվեն խնայողական դրամարկղների կողմից՝ էքսպերտիզացի համար պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանն ուղարկվելու համար։ Էքսպերտիզային ուղարկելու համար պարտատոմսերն իրենց տերերից ընդունում են կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները, նաև այն 1-ին կարգի խնայողական դրամարկղները, վորոնք պետաշխնայդրամարկղների և պետվարկի վերադաս (յերկրային, մարզային կամ քաղաքային) վարչության թույլտվությամբ՝ իրավունք ունեն նման գործառնություններ կատարելու։

1-ին կարգի խնայողական դրամարկղները, վորոնց թույլատրված չէ էքսպերտիզային ուղարկելու համար պարտատոմսեր ընդունել, և 2-րդ կարգի խնայողական դրամարկղները վճարելիության մեջ կասկածներ հարուցող պարտատոմսեր և կուպոններ ներկայացնողներին ուղարկում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղները։

Էքսպերտիզային ուղարկելու համար պարտատոմսեր ընդունելու ժամանակ՝ խնայողական դրամարկղները պարտատոմսերի տիրոջից պահանջում են ներկայացնել անձնագիր, իսկ այն տեղերում, վորտեղ չի մտցված անձնագրային սիստեմ, պահանջում է ներկայացնել անձնավորությունը հաստատող այլ փաստաթուղթ։

Պարտատոմսերն էքսպերտիզային ուղարկելու ծախսերը կատարվում են խնայդրամարկղի հաշվին։

Էքսպերտիզայի համար պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանն ուղարկված պարտատոմսերը չեն վերադարձվում խնայողական դրամարկղին։

Վճարելի ճանաչված պարտատոմսերի փոխարեն՝ Գլխավոր վարչության պետփոխառությունների Բաժինն ուղարկում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին հատուկ թույլտվություն՝ պարտատոմսատիրոջը ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից նույն փոխառության և մասի նոր պարտատոմսեր տալու համար, կամ փոխադրություն է կատարում ուղարկված պարտատոմսերի շահումները վճարելու համար։

Յեթե պարտատոմսերն անվճարելի յեն ճանաչված, այդ մասին Գլխավոր վարչությունը հատուկ նամակով հաղորդում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին։

Իսկ յեթե Գլխավոր Վարչության էքսպերտիզայի հետեվանքով պարտատոմսերը կճանաչվեն կեղծ կամ չինծու, ապա կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության ծանուցագրի հիման վրա՝ նյութերը հանձնում է տեղական միլիցիայի մարմիններին՝ քննության և պարտատոմսերի կեղծման կամ չինծության գործում մեղավորներին պատասխանատվության կանչելու համար։



18. Կեղծ կամ չինծու պարտատոմսեր և կուպոններ վճարման համար խնայողական դրամարկղին ներկայացնելու դեպքում, յեթե պարտատոմսերի կեղծումը կամ չինծությունը ակնառու յե և վոչ մի կասկած չի առաջացնում, ապա այդ պարտատոմսերը կամ կուպոնները խնայողական դրամարկղը խլում է ներկայացնողից։

Նման դեպքերում՝ խնայողական դրամարկղի վարիչը պարտավոր է կանչել միլիցիայի ներկայացուցչին, վորպեսզի միջոցներ ձեռք առնել պարզելու նման պարտատոմսեր կամ կուպոններ ներկայացնողի անձնավորությունը և նրան ձերբակալելու համար։

Պարտատոմսերը խլելու համար կազմվում է ակտ յերկու որինակից՝ պարտատոմսեր կամ կուպոններ ներկայացնողի, վերահսկչի և գանձապահի ստորագրություններով։

Ակտում անպայման պետք է նշվի պարտատոմսեր կամ կուպոններ ներկայացնողի անունը, հայրանունը, ազգանունը և ճիշտ հասցեն, նրա աշխատանքի տեղը, նրա անձնավորությունը հաստատող փաստաթուղթը (անձնագիրը)։

Խլվող պարտատոմսերի և կուպոնների վրա վերահսկիչը պարտավոր է վերցնել այդ պարտատոմսերը ներկայացնողի անձնական ստորագրությունը։

Կեղծ կամ չինծու պարտատոմսերի և կուպոնների ներկայացման մասին յեղած ակտի մեկ որինակը պարտատոմսի կամ կուպոնների հետ միասին հանձնվում է միլիցիայի տեղական մարմնին՝ քննության և մեղավորներին պատասխանատվության կանչելու համար, ԽՍՀ Միության Գերագույն Դատարանի 53-րդ Պլենումի 1936 թ. հունվարի 2-ի պարզաբանման համապատասխան (հավելված № 1)։

19. Պետական փոխառությունների պարտատոմսերը հանդիսանում են վորպես ներկայչական (на пред'явителя) արժեթղթեր։

Խնայողական դրամարկղները վոչ մի դիմում չեն ընդունում պարտատոմսերի կորստյան կամ հափշտակման մասին և չեն ցուցակագրում հափշտակված կամ կորցրած պարտատոմսերը (ԽՍՀ Միության ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1925 թ. հունվարի 16-ի վորոշումը— հավելված № 2։ Արդարադատության Ժողովրդական կոմիսարիատի 1925 թ. ապրիլի 30-ի շրջաբերականը— հավելված № 3)։

20. ԽՍՀ Միության ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1929 թ. հունիսի 14-ի վորոշումը (հավելված № 4) կորցրած ներկայչական փաստաթղթերի իրավունքների վերականգնման մասին (вызывное производство) պետական փոխառությունների կորցրած պարտատոմսերի վրա չի տարածվում։

Համաձայն ԽՍՀ Միության Գերագույն Դատարանի 48-րդ Պլենումի 1934 թ. սեպտեմբերի 17-ի վորոշման՝ (հավելված № 5) вызывное производство-ն կարող է կիրառվել միայն այն ներկայչական փաստաթղթերի նկատմամբ, վորոնց վրա այդ կարգը տարածվում է հատուկ որենքներով (ՌԽՖՍՀ ՔԴՈ-ի 234 հոդվածը և միութենական մյուս հանրապետությունների ՔԴՈ-ի համապատասխան հոդվածները)։

## II. ԿՈՒՊՈՆՆԵՐԻ, ՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

21. Կուպոնները վճարում է խնայողական դրամարկղի գանձապահն անմիջականորեն՝ առանց վերահսկիչի մասնակցության։

Շահումները, նաև մարման խաղարկություններով անցած պարտատոմսերը վճարում է գանձապահն այն բանից հետո, յերբ վերահսկիչն

ստուգում է պարտատոմսը և այն կնքում է վճարման շտամպով:

Վճարման համար ընդունված կուպոնների իսկականության և վճարելիության համար պատասխանատու է գանձապահը, իսկ շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերինը— վերահսկիչն ու գանձապահը համապարտ կերպով: 1 աշխատող ունեցող 2-րդ կարգի խնայողական դրամարկղներում վճարման համար ընդունված պարտատոմսերի և կուպոնների իսկականության և վճարելիության պատասխանատվությունն ընկնում է խնայողական դրամարկղի վերահսկիչի վրա:

22. Շահումների և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման համար յուրաքանչյուր խնայողական դրամարկղում պետք է մշտապես լինի յուրաքանչյուր փոխառության շահումների խաղարկությունների և մարման խաղարկությունների պաշտոնական աղյուսակների յերեքից վոչ պակաս կոմպլեկտ: Աղյուսակների մեկ կոմպլեկտը պահվում է վերահսկիչի մոտ, յերկրորդը— գանձապահի մոտ և յերրորդը (запасной) խնայողական դրամարկղի վարիչի մոտ: Շահումների խաղարկությունների և մարման խաղարկությունների աղյուսակները, վորոնք կոմպլեկտի մեջ են մտնում շահումների վճարման համար, պետք է հաստատված լինեն կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչի ստորագրությամբ և կնիքով: Աղյուսակների այդ կոմպլեկտները հիմք են հանդիսանում պարտատոմսերի վճարման համար և չեն կարող տրվել փոխառության պահողների ձեռքը, նաև չեն կարող խնայողական դրամարկղի մեկ աշխատողի կողմից տրվել մյուսին: Աշխատակիցների հերթափոխման ժամանակ նրանց պետք է տրվեն շահումների խաղարկությունների նոր կոմպլեկտներ:

Բացի այդ՝ յուրաքանչյուր խնայողական դրամարկղը պետք է ունենա աղյուսակների առանձին կոմպլեկտների անհրաժեշտ քանակ, վորոնք տրվում են իրենց պարտատոմսերի ստուգման համար խնայողական դրամարկղին դիմող պարտատոմսատիրոջ:

23. Խնայողական դրամարկղի վերահսկիչն ու գանձապահը պարտավոր են, նախքան շահումի վճարումը, խոշորացույց ապակու միջոցով նայել յուրաքանչյուր շահած պարտատոմսի համարը և սերիայի համարը:

Խոշորացույց ապակու միջոցով պետք է նայել պարտատոմսի համարի և սերիայի համարի յուրաքանչյուր առանձին թվանշանը, նաև այն ցանցը, վորի վրա տեղավորված են այդ համարները:

Պարտատոմսերը նայելու ժամանակ վերահսկիչն ու գանձապահը պետք է համոզվեն այն բանում, վոր պարտատոմսի ցանցը վնասված չէ և համարների բոլոր թվանշաններն ունեն ներկի միատեսակ գույն:

Յեթե պարտատոմսերը խոշորացույց ապակու միջոցով նայելու ժամանակ կնկատվի այն ցանցի թեկուզ ամենափոքրիկ վնասվածք, վորի վրա տպված է սերիայի համարը կամ պարտատոմսի համարը, ապա այդպիսի պարտատոմսը չի վճարվում, այլ ուղարկվում է պետաշխինայդրամարկղների և Պետվարկի Գլխավոր վարչությանը՝ էքսպերտիզայի համար, այս հրահանգի 17-րդ հոդվածում նշված կարգով:

24. Շահումներն ստանալու համար ներկայացրած պարտատոմսը, նաև մարման խաղարկությունով անցած պարտատոմսը, վորը ներկայացվում է վճարման համար, վերահսկիչը պարտավոր է մանրազնին կերպով ստուգելու շահումների կամ մարման խաղարկությունների պաշտոնական աղյուսակներով: Պարտատոմսի իսկականության և վճարելիության մեջ կասկածանք չլինելու դեպքում՝ վերահսկիչը պարտատոմսի առաջին յերեսը կնքում է հետևյալ բովանդակությունն ունեցող վճարման շտամպով.



| |
|---|
| Պետաշխինայդրամարկղ №........................ |
| Տիրաժ №..........................193..........թ. |
| Յենթակա յե վճարման..........................ռուբ...............կոպ. |
| գումարը բառերով.............................................. |
| պարտատոմսին կցված են..........................կուպոններ |
| «..........» ..........................193..........թ. |
| Վերահսկիչ.......................... Գանձապահ.......................... |

25. Տոկոսաբեր-շահող փոխառությունների և թողարկումների պարտատոմսերի շահումների, նաև մարման խաղարկությունով անցած այդպիսի պարտատոմսերի վճարման ժամանակ՝ պարտատոմսի վրա խփվող հաշվարկային շտամպի մեջ անպայման նշվում է պարտատոմսին կից յեղած կուպոնների քանակը:

26. Բոլոր վճարված շահած պարտատոմսերը և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը, բացի Մոսկվայի Խորհրդի փոխառության և գյուղատնտեսության տրակտորիզացիային Ոժանդակող Փոխառության պարտատոմսերից, վերահսկիչը պարտավոր է գրանցել հսկիչ տեղեկագրում հետևյալ № 92 ձևով՝

| Փոխառութ. անվանումը | Տիրաժի №-ը | Սերիայի № ը | Պարտատոմսի №-ը | Պարտատոմսի անվանական արժեքը | Յենթակա յե վճարման |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |

27. № 92 ձևի հսկիչ տեղեկագիրը տարվում է բոլոր փոխառությունների համար ընդհանուր, գրանցելով նրանում միմյանց տակ յուրաքանչյուր պարտատոմսն առանձին:

№ 92 ձևի տեղեկագիրը տարվում է մեկ որինակով և հիմք է ծառայում շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման համար № 54 ձևի որվա ամփոփ որդեր կազմելու համար:

28. Պարտատոմսի վճարման շտամպը լրացնելուց և գործառնությունը հսկիչ տեղեկագրում գրանցելուց հետո՝ վերահսկիչը պարտավոր է պարտատոմսը ներկայացնողին տալ համարով կտրոն՝ (մարկա) դրամարկղից դրամ ստանալու համար, գրել կտրոնի համարը պարտատոմսի վրա, հայտնել պարտատոմս ներկայացնողին նրան հասանելիք գումարի չափը և պարտատոմսը ներքին կարգով հանձնել գանձապահին:

29. Գանձապահն ստանալով վերահսկիչից շահած կամ մարման խաղարկությունով անցած պարտատոմսը, պարտավոր է ուշի-ուշով ստուգել պարտատոմսի վճարելիությունը,

ստուգել պարտատոմսը աղյուսակնե-րով, նաև ստուգել վերահսկչի կող-մից կատարված հաշվարկումը և շտամպի տեքստում ցույց տրված կուպոնների քանակը, վորպիսիք կան պարտատոմսին կից: Այդ ստուգու-մից հետո՝ գանձապահը վճարում է պարտատոմսի վրա յեղած շտամպի մեջ նշված գումարը:

Շահած և մարման խաղարկությու-նով անցած պարտատոմսերի վրայի շտամպը գանձապահն ստորագրում է գրամը պարտատոմսատիրոջը վճա-րելու ժամանակ:

30 Գործառնության որն ավարտ-վելուց հետո՝ վերահսկիչը դուրս է բերում № 92 ձևի հսկիչ տեղեկագրի գործառնությունների հանրագումա-րը:

Հսկիչ տեղեկագրի հանրագումար-ները գանձապահի մոտ յեղած վճար-ված պարտատոմսերի կանխիկի հետ համեմատելուց հետո՝ վերահսկիչը կազմում է բոլոր փոխառություննե-րի համար ընդհանուր № 54 ձևի որ-դեր: Ինչպես «վճարել կանխիկով» հատվածի, նույնպես և «ընդունել արժեքներ» հատվածի որդերը կազմ-վում է պարտատոմսատերերին փաս-տորեն վճարված գումարով: Որդերի տեքստում վերահսկիչը պարտավոր է նշել պարտատոմսերի անվանական արժեքը: Որդերին կցվում է № 92 ձևի հսկիչ տեղեկագիրը:

Որվա ընթացքում վճարված կու-պոնների ընդհանուր գումարով վե-րահսկիչը դուրս է գրում № 54 ձևի առանձին որդեր: Վճարված կուպոն-ների գումարը վերահսկչին հայտնում է գանձապահը:

№ 54 ձևի յերկու որդերներն էլ վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում: Գոր-ծառնության օրագրի № 25—ա ձևի հավելվածում որդերների գումարը ցույց է տրվում «վճարված տիրաժա-յին արժեքներ» սյունակում «այլ մուտք» տողում:

31. Որվա վերջը գանձապահը, վե-րահսկչի ներկայությամբ պարտա-վոր է մարել վճարված պարտատոմ-սերը, ծակելով պարտատոմսի՝ բառերով տպված անվանական արժեքը, իսկ կուպոնները—ծակելով կուպոննե-րի՝ թվանշաններով նշանակված ար-ժեքը: Տոկոսաբեր փոխառություն-ների և թողարկումների պարտատոմ-սերի մարման ժամանակ՝ մարվում են նաև պարտատոմսին կից յեղած բոլոր կուպոնները:

Մարված կուպոններն ու պար-տատոմսերը տեսակավորվում են ըստ փոխառությունների և ըստ իրենց արժողության և ծրարվում են յուրա-քանչյուր փաթեթում 100-ական թերթ: Բացի այդ, պարտատոմսերը դասավորվում են սերիաների հա-մարների հետզհետե բարձրացող կարգով:

Վճարված կուպոնների և պարտա-տոմսերի փաթեթները պետք է ծր-արվեն: Յուրաքանչյուր ծրարի վրա գանձապահը պարտավոր է նշել իր ստորագրությամբ՝ խնայողական դրամարկղի համարը, փոխա-ռության անվանումը, կուպոնների կամ պարտատոմսերի քանակը, պարտատոմսերի անվանական արժե-քը և նրանցով վճարված գումարը:

32. Մոսկվայի Խորհրդի փոխառու-թյան և գյուղատնտեսության տրակ-տորիզացիայի Օժանդակող Փոխա-ռության պարտատոմսերի շահում-ների վճարումը, նաև այդ փոխա-ռությունների մարման խաղարկու-թյունով անցած պարտատոմսերի անվանական արժեքի վճարումը ձե-վակերպվում է № 54 ձևի առանձին որդերով՝ յուրաքանչյուր գործառ-նության համար: Որդերի տեքստում նշվում է փոխառության անվանումը և պարտատոմսի անվանական արժե-քը, իսկ շահած պարտատոմսերինը՝ բացի այդ,— վճարման յենթակա գումարը, սերիայի համարը, պար-տատոմսի համարը և շահումների խաղարկության համարը:

Յուրաքանչյուր որդերի գումարը



գրանցվում է № 24 ձևի գործառնու-թյան օրագրում «յելք կանխիկով—այլք» և «արժեքների մուտք» սյու-նակներում:

Որդերների ընդհանուր գումարը ցույց է տրվում գործառնության օ-րագրի № 25—ա ձևի հավելվածում «Զանազան հիմնարկություններին և անձանց պատկանող արժեքներ» հատ-վածի առանձին սյունակում, «Այլ մուտք» տողում:

## III. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՅԵՎ ԵՔՍՊԵՐՏԻԶԱՅԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱՇԽԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՈՒ ՊԵՏՎԱՐԿԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

33. Եքսպերտիզայի ուղարկելու դրամարկղի վերահսկիչը պարտավոր համար ընդունված պարտատոմսերի է կազմել ցուցակ՝ հետևյալ № 99 և կուպոնների համար խնայողական ձևով:

Խնայողական դրամարկղ № ..................

քաղաք / գյուղ ________________ ցուցակ № ..................

Շրջան .................................... եքսպերտիզայի կամ խոշոր շահումներ պահանջելու համար

մարզ / յերկիր .................................... պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության ուղարկվող պարտատոմսերի և կուպոնների:

«..........» .................. 193 թ.

1. Ումն է պատկանում պարտատոմսերը (նշվում է տիրոջ ազգանունը, անունը և հայրանունը ամբողջությամբ):
2. Տիրոջ հասցեն:
3. Անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթերի համարը և թե ում կողմից է տրված անձնագիրը:
4. Աշխատանքի վայրը:
5. Արժեքների վնասման բնույթն ու պատճառը:

| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կուպոնների (քանակը) | Պարտատոմսեր | | | | | | Նշում դուրս գրելու մասին (լրացնում է գլխ. վարչությունը) | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Փոխառութ. մարման աղյուսակի տողը | Թողարկման №-ը | Սերիայի №-ը | Անվանական արժեքը | Շահումի գումարը | Ինչ կուպոններ | Գումար | Որդերի №-ը | Վոր ամսին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Ընդամենը . . | | | | | | | | | | |

Խնայդրամարկղի վարիչ՝ ..............................

Գանձապահ՝ .............................. Վերահսկիչ՝ ..............................



II-28344գր

№ 99 ձևի ցուցակը կազմվում է յերեք օրինակից՝ յուրաքանչյուր պարտատոմսատիրոջից ընդունված արժեքների համար առանձին:

34. Եքսպերտիզայի համար ընդունված յուրաքանչյուր պարտատոմսի (կամ կուպոնի) հակադիր կողմում վերահսկիչը պարտավոր է ստորագրել տալ պարտատոմսատիրոջը:

Պարտատոմսերն ու կուպոններն եքսպերտիզայի համար ընդունելու դիմաց՝ ներկայացնողին տրվում է № 31 ձևի անվանական անդորրագիր՝ նշելով փոխառության անվանումը, արժողությունը, ընդունված պարտատոմսերի կամ կուպոնների համարներն ու սերիաները, իսկ շահած պարտատոմսերի նկատմամբ— նաև շահումների գումարները:

Եքսպերտիզայի համար ընդունված պարտատոմսերի և կուպոնների համար վերահսկիչը կազմում է № 54 ձևի օրդեր: Շահած պարտատոմսերի համար օրդերը գրվում է վճարման յենթակա գումարով, օրդերում նշվում է փոխառության և մասի անունը, արժողությունը, սերիայի համարը և պարտատոմսերի համարը: Օրդերի գումարը վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում «արժեքների մուտք» սյունակում և № 25—ա ձևի հավելվածում «եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունակում «այլ մուտք» տողում:

35. Առաջին կարգի խնայողական դրամարկղներն եքսպերտիզայի համար իրենց կողմից ընդունած կուպոններն ու պարտատոմսերը ուղարկում են իրենց կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղին՝ հենց պարտատոմսատերերից պարտատոմսերն ու կուպոններն ընդունելու օրը: Կուպոններն ու պարտատոմսերն ուղարկվում են արժեքավոր ծրարով:

Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի գումարով վերահսկիչը յուրաքանչյուր ցուցակի համար կազմում է № 61 ձևի օրդեր:

Այդ օրդերի «Ա» բլանկը №99 ձևի ցուցակի յերկու օրինակների և ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի հետ միասին գանձապահը վերահսկիչի ներկայությամբ դնում է ծրարի մեջ, վորը կնքվում է:

Ծրարի վրա նշվում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հասցեն և մակագրվում է՝

«Եքսպերտիզայի համար»:

Արժեքավոր ծրարն ապահովագրվում է ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի անվանական արժեքով: Յեթե ուղարկվում են շահող պարտատոմսեր, ապա ծրարը պետք է ապահովագրվի շահած պարտատոմսերով վճարման յենթակա գումարով:

Կուպոններն ու պարտատոմսերը եքսպերտիզայի համար ուղարկելու ծախսերը կատարվում է խնայողական դրամարկղի հաշվին:

№ 61 ձևի օրդերի («Բ» բլանկի) գումարը վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների յելք» սյունակում և № 25—ա ձևի հավելվածում «եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունակում, «ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում:

№ 99 ձևի ցուցակի յերրորդ օրինակը խնայդրամարկղի վերահսկիչը պահում է առանձին թղթապանակում: Այդ թղթապանակում № 99 ձևի ցուցակները վերահսկիչը կարում է համարների հետևողական և հերթական կարգով:

Խնայողական դրամարկղում մնացող № 99 ձևի ցուցակի յուրաքանչյուր օրինակի վրա վերահսկիչը պարտավոր է նշել (ցուցակի հակադիր կողմում) կուպոններն ու պարտատոմսերը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին



ուղարկելու ժամանակը և փոստի անդորրագրի համարը:

36. Եքսպերտիզային ուղարկելու համար 1-ին կարգի խնայողական դրամարկղից ստացված կուպոններն ու պարտատոմսերը ստուգվում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղում պահեստարանի վարիչի (գանձապահի) կողմից, գործառնության մասի վերահսկիչի ներկայությամբ № 99 ձևի ցուցակի տվյալների հետ: Ստուգման ժամանակ վորոշվում է թե խնայողական դրամարկղները պահպանել են արդյո՞ք պարտատոմսերն ու կուպոնները եքսպերտիզայի համար ընդունելու կարգը և № 99 ձևի ցուցակը կազմելու ճշտությունը:

Պահեստարանի վարիչը (գանձապահը) պարտատոմսերն ու կուպոններն ընդունելու համար ստորագրում է № 61 ձևի օրդերի «Ա» բլանկը և այդ օրդերը № 99 ձևի ցուցակի մեկ օրինակի հետ հանձնում է գործառնության մասի պահեստարանի վերահսկչին:

№ 61 ձևի օրդերի («Ա» բլանկի) գումարը վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում «արժեքների մուտք» սյունակում և № 25—ա ձևի հավելվածում «եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունակում, «ստացված է իր շրջանի խնայդրամարկղներից» տողում: № 99 ձևի ցուցակները վերահսկիչն օրվա հաշվետվության հետ՝ հանձնում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությանը: Հաշվապահությունը պարտավոր է № 99 ձևի ցուցակները պահել ըստ խնայողական դրամարկղների առանձին թղթապանակներում, ցուցակների ստացման ժամանակագրական կարգով:

Ծանոթություն: Գործառնության մասի կողմից եքսպերտիզայի համար ընդունված պարտատոմսերի և կուպոնների № 99 ցուցակների յերկրորդ օրինակները վերահսկիչը պահում է առանձին թղթապանակում, վորոնք կարվում են ցուցակների համարների հետևողական կարգով: № 99 ձևի ցուցակների յերրորդ օրինակները վերահսկիչը հանձնում է հաշվապահությանը՝ պահելու համար:

37. Եքսպերտիզայի համար յենթակա խնայողական դրամարկղից ստացված և փոխառության պահողներից գործառնության մասի կողմից անմիջականորեն ընդունված պարտատոմսերն ու կուպոնները կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղն արժեքավոր ծրարով ուղարկում է պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը (Москва, Центр, ул. Куйбышева, № 9) վոչ ուշ, քան պարտատոմսերն ու կուպոններն ստանալու հետևյալ օրը:

Եքսպերտիզայի համար ուղարկվող պարտատոմսերի և կուպոնների գումարով գործառնության մասի վերահսկիչը կազմում է № 53 ձևի օրդեր:

Այդ օրդերի գումարը վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների յելք» սյունակում և № 25—ա հավելվածում «եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունակում «ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում:

Պահեստարանի վարիչը (գանձապահը) վերահսկչի ներկայությամբ դնում է ծրարի մեջ ուղարկվող պարտատոմսերն ու կուպոնները № 99 ձևի ցուցակների մեկ օրինակի հետ և կնքում ծրարը:

Ծրարի վրա մակագրվում է՝ «եքսպերտիզայի համար («Для экспертизы»):

Արժեքավոր ծրարն ապահովագրվում է ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի անվանական արժեքով, իսկ շահած պարտատոմսերի նկատմամբ— վճարման յենթակա գումարով:

Առաքումը կատարվում է խնայողական դրամարկղի հաշվին (փոստի ծախսերը):

Գործառնության մասի կողմից ընդունված պարտատոմսերի և կուպոնների № 99 ձևի ցուցակների իր մոտ մնացած օրինակների վրա վերահսկիչը նշում է (յուրաքանչյուր ցուցակի հակադիր կողմում) պարտատոմսերի և կուպոնների առաքման ժամանակը, նաև փոստի անդորրագրի համար:

38. Եքսպերտիզայի համար ուղարկված և վճարելի ճանաչված պարտատոմսերի փոխարեն ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից պարտատոմսեր տալու թույլտվությունը, վորը տրվում է պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության կողմից, պետք է ունենա յերեք ստորագրություն՝ առաջին ստորագրությունը— պետական փոխառությունների բաժնի պետինը կամ նրա տեղակալինն է, յերկրորդ ստորագրությունը— պարտատոմսերի եքսպերտիզայի Բյուրոյի վարիչինն է, յերրորդ ստորագրությունը— պարտատոմսերի եքսպերտիզայի Բյուրոյի ավագ հաշվապահինն է: Թույլտվությունները հաստատվում են պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության կնիքով: Գլխավոր վարչությունը բոլոր կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներին հայտնում է առաջին ստորագրության— պետփոխառությունների բաժնի պետի և նրա տեղակալի ստորագրության նմուշները:

Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները պարտավոր են ուշի-ուշով ստուգելու իրենց կողմից ստացվող թույլտվությունների ձևակերպման ճշտությունը: Առանց վերևում մատնանշված անձերի յերեք ստորագրություններից վորևե մեկի և գլխավոր վարչության կնիքի՝ թույլտվությունները չեն կատարվում:

39. ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից պարտատոմսեր տալու թույլտվությունը պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությունից ստանալու որը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գլխավոր հաշվապահը թույլտվությունը համեմատում է № 99 ձևի ցուցակի տվյալների հետ, Գլխավոր վարչության թույլտվության վրա նշում է այդ ցուցակի դասան և համարը և Գլխավոր վարչության թույլտվությունը հանձնում է գործառնության մասի վերահսկչին: Վերահսկիչը դուրս է գրում յերկու օրդեր՝ № 53 ձևի օրդեր— ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից պարտատոմսերը դուրս գրելու համար և № 54 ձևի օրդեր— այդ պարտատոմսերը մուտք անելու համար մինչև այդպիսիք իրենց տերերին հանձնելը կամ յենթակա խնայողական դրամարկղներին ուղարկելը:

№ 54 ձևի օրդերում նշվում է պարտատոմսատիրոջ ազգանունը, փոխառության անունը և մասը, արժողությունը, սերիայի համարը և պարտատոմսի համարը, վորը դուրս է գրվել ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից և պետք է տրվի տիրոջը: Պարտատոմսերի արժողությունը, սերիաներն ու համարները վերահսկիչը գրանցում է օրդերում՝ համաձայն պահեստարանի վարիչի (գանձապահի) տեղեկանքի:

№ 53 և 54 ձևերի օրդերների գումարները գրանցվում են գործառնության օրագրում «Արժեքների յելք» և «Արժեքների մուտք» սյունյակներում համապատասխանաբար:

№ 53 ձևի օրդերի գումարը գրանցվում է գործառնության օրագրի № 25—ա ձևի հավելվածում համապատասխան փոխառության սյունյակում «Այլ յելք» տողում, իսկ № 54 ձևի օրդերի գումարը—«Եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունյակում «Այլ մուտք» տողում: Գլխավոր վարչության թույլտվությունը՝ պարտատոմսեր տալու



մասին վերահսկիչը մարում է մակագրելով՝ «կատարված է, դասա, ստորագրություն» և կցվում է № 53 ձևի օրդերին:

Եքսպերտիզայի համար գործառնության մասի կողմից ընդունված կուպոնների և պարտատոմսերի № 99 ձևի ցուցակների հակադիր կողմում (հոդ. 36), վերահսկիչն իր ստորագրությամբ նշում է Գլխավոր վարչության թույլտվության դասան և համարը, նաև փոխառության անունը և մասը, տիրոջը տրվող պարտատոմսերի արժողությունը, սերիաները և համարները:

40. Յեթե Գլխավոր վարչության թույլտվության համաձայն պարտատոմսերը պետք է տրվեն տերերին, վորոնք իրենց պարտատոմսերը եքսպերտիզայի համար հանձնել են 1-ին կարգի խնայողական դրամարկղների միջոցով, ապա նման պարտատոմսերը ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից դուրս գրելուց հետո (հոդ. 39) կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղներն ուղարկում են համապատասխան յենթակա խնայողական դրամարկղներին:

Գործառնության մասի վերահսկիչը հաշվապահության կարգադրության հիման վրա՝ այդ պարտատոմսերի առաքումը ձևակերպում է № 61 ձևի օրդերով, նշելով օրդերում փոխառության պահողի ազգանունը, անունն ու հայրանունը, վորին տրվելու յեն պարտատոմսերը՝ եքսպերտիզայի համար նրանից ընդունված պարտատոմսերի փոխարեն, փոխառության և մասի անունը, պարտատոմսերի արժողությունը, սերիաներն ու համարները, նաև պարտատոմսերն եքսպերտիզային ուղարկելու համար ընդունելու ժամանակ յենթակա խնայողական դրամարկղի կողմից կազմված № 99 ձևի ցուցակի դասան և համարը:

№ 61 ձևի օրդերի գումարը վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների յելք» սյունյակում և № 25—ա հավելվածում «Եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունյակում «Ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում: № 61 ձևի օրդերը («Բ» բլանկը) օրվա հաշվետվության հետ հանձնվում է հաշվապահությանը:

№ 61 ձևի օրդերի «Ա» բլանկը ուղարկվող պարտատոմսերի հետ միասին՝ պահեստարանի վարիչը (գանձապահը) վերահսկչի ներկայությամբ դնում է ծրարի մեջ, վորը կնքվում է:

Պարտատոմսերի արժեքավոր ծրարների առաքումը կատարվում է այս հրահանգի 37-րդ հոդվածում մատնանշված կարգով:

41. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղից 1-ին կարգի խնայդրամարկղներում ստացված պարտատոմսերը № 61 օրդերում յեղած գրանցումներով ստուգում է գանձապահը՝ վերահսկչի ներկայությամբ:

Այդ օրդերի հիման վրա՝ վերահսկիչը ստացված պարտատոմսերի գումարը գրանցում է № 24 ձևի օրագրում «Արժեքների մուտք» սյունյակում և 25—ա հավելվածում «Եքսպերտիզայի համար ընդունված արժեքներ» սյունյակում «Ստացված է իր շրջանի խնայողական դրամարկղներից» տողում:

Վերահսկիչը պետք է իր մոտ պահվող № 99 ձևի ցուցակների հակադիր կողմում նշի այն № 61 ձևի օրդերի դասան և ժամանակը, վորի հետ ստացվել են պարտատոմսերը, փոխառության և մասի անունը, տիրոջը տալու յենթակա պարտատոմսերի արժողությունը, սերիաները և համարները:

42. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասի վերահսկիչը և 1-ին կարգի խնայողական դրամարկղների վերահսկիչները պարտավոր են

եքսպեդիցիայի համար հանձնած պարտատոմսերի տերերին ծանուցագիր ուղարկելու այն մասին, վորպեսզի նրանք ներկայանան եքսպեդիցիայի համար հանձնած պարտատոմսերի փոխարեն նոր պարտատոմսեր ստանալու:

Պարտատոմսերի տիրոջ ներկայանալու ժամանակ վերահսկիչը համոզվում է նրա անձնավորության մեջ, համեմատելով նրա ներկայացրած անձնագիրը (կամ այն փոխարինող փաստաթուղթը) № 99 ձևի ցուցակի գրանցումների հետ, վերցնում է նրանից և մարում նախկինում գրված № 31 ձևի անդորրագիրը և № 99 ձևի ցուցակում նշում է պարտատոմսերը տալու մասին:

Տրվող պարտատոմսերի գումարով վերահսկիչը դուրս է գրում № 53 ձևի օրդեր և № 31 անդորրագիրը կցում է նրան: Պարտատոմսերն ստանալու համար վերցվում է նրանց տիրոջ ստորագրությունն օրդերի վրա, վորից հետո օրդերն ուղարկվում է գանձապահին՝ պարտատոմսեր տալու համար:

№ 53 ձևի օրդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների ելք» սյունակում և № 25—ա ձևի հավելվածում «Եքսպեդիցիայի համար ընդունված արժեքներ» սյունակում «այլ ելք» տողում:

43. Կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները խոշոր շահումներ շահած պարտատոմսերն ընդունում են իրենց տերերից (հրահանգի 2-րդ հոդվածը) և այդ պարտատոմսերը եքսպեդիցիայի և շահումի վճարելու համար պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանն ուղարկելը ձևակերպում են այն նույն կարգով, վորը նշված է այս հրահանգի 33, 34 և 37 հոդվածներում:

Յեթե շահած պարտատոմսերի տերը այդպիսին Գլխավոր վարչությանն ուղարկելու համար կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին հանձնելիս ցանկություն է հայտնում ստանալ շահումն առանց իր ազգանունը հայտնելու, ապա պարտատոմսերն ընդունելու համար նրան տրվում է ներկայչական անդորրագիր № 31 ձևի: Այդ դեպքում չի պահանջվում, վոր պարտատոմս ներկայացնողն իր սեփական ձեռքով ստորագրի պարտատոմսի վրա, իսկ № 99 ձևի ցուցակում ազգանվան փոխարեն նշանակվում է «ներկայիչ» («пред'явитель»):

Այդ ներկայչական անդորրագիրը կորցնելու մասին խնայողական դրամարկղը վոչ մի պահանջ չի ընդունում:

№ 31 ձևի ներկայչական անդորրագիրը կորցնելու դեպքում՝ պարտատոմսերի տերը կարող է շահումն ստանալու իրավունքը վերականգնել միայն դատարանի միջոցով:

Եքսպեդիցիայի համար ուղարկվող պարտատոմսերն առանց տիրոջ ազգանունը նշելու ընդունվում են միայն այն պայմանով, յեթե պարտատոմսերը վճարելիության մեջ վոչ մի կասկած չեն հարուցում:

44. Վճարելի ճանաչված շահած պարտատոմսերն ու կուպոնները պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությունը վճարում է պարտատոմսերով և կուպոններով հասնող գումարները կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղների հասցեյով փոխադրումներ անելու միջոցով:

Յեթե պարտատոմսերով պետք է վճարել 10·000 ռ. վոչ ավել, ապա այդ գումարը փոխադրվում է № 10 ձևի մեկ փոխադրական բլանկով, իսկ յեթե շահումն անցնում է 10·000 ռ. ապա գումարը փոխադրվում է № 10 ձևի մի քանի բլանկներով: Փոխադրության յուրաքանչյուր № 10 ձևի բլանկն օգտագործվում է, վորպես բացառություն փոխադրությունների ձևակերպման ընդհանուր կարգից, մինչև 10·000 ռուբլի գումարների փոխադրության համար:



Փոխադրության տեքստում նշվում է փոխատվության անունը, շահած պարտատոմսի համարն ու սերիան, շահումի գումարը և պարտատոմսի տիրոջ ազգանունը (պարտատոմսատիրոջ ազգանունը չի նշվում շահումները ներկայչական անունով փոխադրելու ժամանակ):

Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությունից ստացվող շահումների վճարման փոխադրությունները պետք է ստորագրված լինեն յերկու անձի կողմից՝ առաջին ստորագրությունը— Եքսպեդիցիայի Բյուրոյի վարիչինը կամ նրա տեղակալինը, յերկրորդ ստորագրությունը— ավագ հաշվապահինը: Եքսպեդիցիայի Բյուրոյի վարիչի և նրա տեղակալի առաջին ստորագրության նմուշը պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր Վարչությունը հաղորդում է բոլոր կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներին:

45. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահության կողմից ստացված № 10 ձևի փոխադրությունը № 99 ձևի ցուցակի տվյալների հետ ստուգելուց հետո՝ հանձնվում է գործառնության մասի վերահսկչին՝ վճարման համար: Փոխադրության վրա նշվում է № 99 ձևի ցուցակի դասան և համարը: Վերահսկիչը պարտատոմսատիրոջը ծանուցագիր է ուղարկում փոխադրությունն ստացվելու մասին:

Փոխադրության վճարումը կատարվում է այն ժամանակ, յերբ պարտատոմսատերը ներկայացնում է նախկինում իրեն տրված № 31 ձևի անդորրագիրը, վորը վերցվում է նրանից, մարվում է մակագրությամբ՝ «շահումը վճարված է . . . . . . . գումարով, դասան, վերահսկչի և գանձապահի ստորագրությունները» և կցվում է վճարված փոխադրության բլանկին:

Փոխադրությունը վճարելու ժամանակ վերահսկիչը պարտավոր է համոզվել պարտատոմսատիրոջ անձնավորության մեջ, համեմատելով ներկայացրած փաստաթուղթը (անձնագիրը) № 99 ձևի ցուցակի գրանցումների հետ, և դրամն ստանալու համար ստորագրել տալ պարտատոմսատիրոջը (№ 10 ձևի փոխադրության հակադիր կողմում):

Անվանական անդորրագիրը կորցնելու դեպքում՝ հաճախորդն այդ մասին հայտնում է գրավոր կերպով, վորը կցվում է վճարված փոխադրության բլանկին:

Ծանոթություն: 1-ին կարգի խնայողական դրամարկղի կողմից եքսպեդիցիայի համար ընդունված պարտատոմսերը կամ կուպոնները վճարելու համար փոխադրություն ստանալու դեպքում՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղն այդ փոխադրությունն ուղարկում է ստորին խնայողական դրամարկղին՝ սահմանված կարգով:

46. Այնպիսի փոխադրության վճարելու դեպքում, վորում չի նշված ստացողի ազգանունը, պարտատոմսերի տերը պետք է նախկինում իրեն տրված № 31 ձևի ներկայչական անդորրագիրն անպայման վերադարձնի վերահսկիչին: Այդ անդորրագիրը մարվում է մակագրությամբ՝ «Շահումը վճարված է . . . . . . . գումարով, դասան, վերահսկչի և գանձապահի ստորագրությունները» և կցվում է փոխադրությանը՝ փոխադրություն ստացողի ստորագրության փոխարեն:

47. Պարտատոմսերի տիրոջ պահանջով՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը պարտավոր է փոխադրությամբ վճարված գումարի մասին պաշտոնական տեղեկանք տալ նրան:

Տեղեկանքում նշվում է պարտատոմսատիրոջ ազգանունը, անունը և հայրանունը, փոխատվության անունը, շահած պարտատոմսի սերիան, համարը և արժողությունը, վճար-

ված շահումի դատան և գումարը։

Տեղեկանքն ստորագրում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչն ու վերահսկիչը։

Ներկայիչի անունով վճարված շահումների համար տեղեկանքներ չեն տրվում։

48. Այն դեպքում, յերբ ստացվում ե Գլխավոր վարչության ծանուցագիրն այն մասին, վոր պարտատոմսերն անվճարելի յեն ճանաչված, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունն այդ ծանուցագրի վրա նշում ե № 99 ձևի ցուցակի դատան և համարը և ծանուցագիրը հանձնում ե գործառնության մասի վերահսկիչին կամ ծանուցագիրն ուղարկում ե այն ստորին խնայողական դրամարկղին, վորը պարտատոմսերն ու կուպոններն ընդունել ե եքսպերտիզայի համար։ Գործառնության մասի կամ ստորին խնայողական դրամարկղի վերահսկիչը պարտավոր ե եքսպերտիզայի արդյունքները հաղորդել պարտատոմսերի տիրոջը։

Գլխավոր վարչության ծանուցագրի վրա վերահսկիչը մակագրում ե՝ «Տեղեկությունը հաճախորդին ուղարկված ե, դատան, ստորագրություն» և ծանուցագիրն որվա հաշվետվության հետ միասին ուղարկում ե հաշվապահությանը։

Յեթե համաձայն Գլխավոր վարչության ծանուցագրի պարտատոմսերն ու կուպոնները ճանաչվել են հարմարեցված կամ կեղծ, ապա կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղն այդ մասին անհապաղ հայտնում ե միլիցիայի տեղական մարմնին՝ քննության և պարտատոմսեր ներկայացնողին քրեական պատասխանատվության կանչելու համար։ Այդ դեպքում՝ խնայողական դրամարկղը ծանուցագիրը պարտատոմսերի տիրոջը չի ուղարկում։ Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը նման դեպքի մասին տեղեկացնում ե այն ստորին խնայողական դրամարկղին, վորը պարտատոմսերը կամ կուպոններն ընդունել ե եքսպերտիզայի համար։

Գործը միլիցիայի տեղական մարմնին հանձնելու յուրաքանչյուր դեպքի և քննության արդյունքների մասին կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչը պարտավոր ե հայտնել պետաշխնայդրամարկղների և պետվարկի իր վարչությանը։

## IV. ՀԱՐՄԱՐԵՑՐԱԾ ՅԵՎ ԿԵՂԾ ԿՈՒՊՈՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՅԵՎ ԱՌԱՔՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

49. Խլված կեղծ կամ հարմարեցրած պարտատոմսերի և կուպոնների համար խնայողական դրամարկղի վերահսկիչը դուրս ե գրում № 54 ձևի որդեր՝ պարտատոմսերի անվանական արժեքով։ Որդերին կցվում ե պարտատոմսերը կամ կուպոնները ներկայացնողից խլելու ժամանակ կազմված ակտի մեկ որինակը։

№ 54 ձևի որդերի գումարը գրանցվում ե № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների մուտք» սյունակում և գործառնության որագրի № 25—ա ձևի հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Այլ մուտք» տողում։

Պարտատոմսեր ներկայացնողին պետք ե տրվի № 31 ձևի անվանական անդորրագիր՝ պարտատոմսերն ու կուպոնները նրանից առնելու համար, նշելով անդորրագրում փոխառության անունը, կարգը, պարտատոմսերի սերիաները, համարները և արժողությունը, նաև պարտատոմսերը խլելու պատճառները։

Այդ պարտատոմսերն ու կուպոնները միլիցիայի մարմիններին հանձնելու ժամանակ՝ վերահսկիչը դուրս



ե գրում № 53 ձևի որդեր։ Այդ որդերի գումարը գրանցվում ե № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների ելք» սյունակում և գործառնության որագրի № 25—ա ձևի հավելվածում, «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Այլ ծախսեր» տողում։

50. Կեղծ, հարմարեցրած կամ մարման նշաններ ունեցող պարտատոմսեր խնայողական դրամարկղներում թողնելն արգելվում ե։ Ներկայացնողներից խլված այնպիսի պարտատոմսեր և կուպոններ, վորոնք չեն պահանջվում միլիցիայի մարմնի կողմից՝ գործի քննության կամ մեղավորներին պատասխանատվության կանչելու համար, 1—ին և 2—րդ կարգի խնայողական դրամարկղները պետք ե անհապաղ ուղարկեն իրենց կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղներին, իսկ վերջինս պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը՝ (եքսպերտիզային բյուրոյին) № 99 ձևի ցուցակի հետ միասին։

Խլված պարտատոմսերն ու կուպոնները 1—ին կամ 2—րդ կարգի խնայողական դրամարկղից կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին ուղարկելը վերահսկիչը ձևակերպում ե № 61 ձևի որդերով։ № 61 ձևի որդերի գումարը («Բ» բլանկը) գրանցվում ե գործառնության որագրում «Արժեքների ելք» սյունակում և № 25—ա ձևի հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Ուղարկված ե խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում։

51. 1—ին և 2—րդ կարգի խնայողական դրամարկղներից № 61 ձևի («Ա» բլանկի) որդերի հետ ստացված պարտատոմսերն ու կուպոնները կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գործառնության մասի վերահսկիչը մուտք ե անում № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների մուտք» սյունակում. № 25—ա ձևի հավելվածում որդերի գումարը գրանցվում ե «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Ստացված ե իր շրջանի խնայողական դրամարկղներից» տողում։

Կեղծ կամ հարմարեցրած պարտատոմսերի առաքումը պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը ձևակերպում ե պարտատոմսերն եքսպերտիզային ուղարկելու համար սահմանված կարգով (հոդ. հոդ. 33 և 37) բայց պարտատոմսերը խլելու ժամանակ կազմված ակտի պատճենն անպայման կցելով ուղեկցող փաստաթղթերին։ Բացի այդ, այդ փաստաթղթերին պետք ե կցվի այն պատճառների բացատրությունը, վորոնցով պարտատոմսերը չեն պահանջվել միլիցիայի մարմինների կողմից։

Այդ պարտատոմսերի առաքումը Գլխավոր վարչությանը՝ վերահսկիչը ձևակերպում ե № 53 ձևի որդերով։ Այդ որդերի գումարը գրանցվում ե № 24 ձևի գործառնության որագրի «Արժեքների ելք» սյունակում և № 25—ա հավելվածի «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Ուղարկված ե խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում։

## V. ՎՃԱՐՎԱԾ ԿՈՒՊՈՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ 1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԿԱՐԳԻ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՄ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ ՈՒՂԱՐԿԵԼԸ

52. 1—ին և 2—րդ կարգի խնայողական դրամարկղների կողմից վճարված կուպոններն ու պարտատոմսերը պետք ե ամեն որ նրանց կողմից հանձնվեն (ուղարկվեն) իրենց կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին։

Կենտրոնական կամ շրջանային

խնայողական դրամարկղի վարիչը իրավունք ունի 1–ին կարգի խնայողական դրամարկղների համար սահմանելու վճարված պարտատոմսերի և կուպոնների հանձնումը վոչ պակաս, քան 5 օրը մեկ անգամ, յեթե այդ կուպոններն ու պարտատոմսերը փոքր գումար են կազմում և նրանց պահելը 1–ին կարգի խնայողական դրամարկղներում միանգամայն ապահով է հուսալի պահարաններում։

53․ Ըստ առանձին փոխառությունների և արժողության դասավորված ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի համար՝ 1–ին և 2–րդ կարգի խնայողական դրամարկղի գանձապահը պարտավոր է ընդհանուր գումարներով կազմելու յուրաքանչյուր փոխառության ցուցակ՝ հետևյալ № 149 ձևով։

| ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ | Կուպոններ | | Շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսեր | | |
|---|---|---|---|---|---|
| | Քանակ | Գումար | Քանակ | Պարտատոմսերի անվանական արժեքը | Պարտատոմսերով վճարված գումարը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |

Գանձապահ՝.............................................

54․ Վերահսկիչը պարտավոր է նախ քան վճարված կուպոնները և պարտատոմսերն ուղարկելը հավաստիանալ այն բանում, վոր նրանց գումարն ըստ № 149 ձևի ցուցակի՝ համընկնում է այն մնացորդի հետ, վորպիսին ցույց է տրված գործառնության օրագրի № 25–ա ձևի հավելվածում։

Ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի համար վերահսկիչը կազմում է № 61 ձևի օրդեր։ Այդ օրդերի «Ա» բլանկը № 149 ձևի ցուցակի հետ դրվում է պարտատոմսերի և կուպոնների ծրարում, ընդ վորում ծրարումը պետք է կատարի գանձապահը վերահսկչի ներկայությամբ։

№ 61 ձևի օրդերը («Բ» բլանկի) գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների յելք» սյունյակում № 25–ա հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում «Ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հաշիվներով» տողում։



Վճարված և մարված կուպոններն ու պարտատոմսերը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին փոստով ուղարկելու ժամանակ ապահովագրվում են փոստի կանոններով թույլատրվող մինիմալ գնահատումով։

55․ 1–ին կամ 2–րդ կարգի խնայողական դրամարկղից ստացված վճարված կուպոններն ու պարտատոմսերը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի պահեստարանի վարիչը (գանձապահը) ընդունում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վերահսկիչի կամ խնայդրամարկղի վարիչի կողմից նշանակվող ուրիշ աշխատակցի ներկայությամբ։

Ստացված կուպոնները և պարտատոմսերը պետք է գանձապահն ըստուգի այդպիսիք ստանալու որը՝ թերթերը մի առ մի հաշվելով և համեմատելով յուրաքանչյուր փոխառության հանրագումարային գումարները № 149 ձևի ցուցակի հետ, վորը կցված է № 61 ձևի օրդերի «Ա» բլանկին։ Շահած և մարման խաղարկություններով անցած պարտատոմսերով պետք է ստուգվեն վոչ միայն պարտատոմսերի անվանական արժեքը, այլև նրանցով վճարված գումարը։

Կուպոններն ու պարտատոմսերը մի առ մի թերթերով նայելու ժամանակ պահեստարանի վարիչը (գանձապահը) պարտավոր է հավաստիանալ այն բանում, վոր նրանց թվում չկան այնպիսի պարտատոմսեր, վորոնք կասկածներ հարուցեն վճարելության և իսկականության մեջ, վոր բոլոր պարտատոմսերը կնքված են չտամպով, վորտեղ պարզորեն նշված է արժեքները վճարած խնայողական դրամարկղի համարը և վոր կուպոններն ու պարտատոմսերը մարված են (ծակված են)։

Յերբ պարտատոմսի վրա բացակայում է չտամպը և խնայողական դրամարկղի համարը, պահեստարանի վարիչն այդ համարը դրում է իր ստորագրությամբ և այն աշխատողի ստորագրությամբ, վորը մասնակցել է պարտատոմսերի ըստուգմանը։

1–ին և 2–րդ կարգի խնայողական դրամարկղից ստացված պարտատոմսերը պահեստարանի վարիչը (գանձապահը) պետք է ստուգի նաև շահումների և մարման խաղարկությունների աղյուսակներով։

Յեթե ընդունվող վճարված կուպոնները և պարտատոմսերը չեն մարվել (չեն ծակվել), ապա պահեստարանի վարիչը (գանձապահը) պարտավոր է ստուգման հետ միաժամանակ մարել (ծակել) այդպիսիք՝ ստուգմանը մասնակցող աշխատողի ներկայությամբ։

56․ Պարտատոմսերի ու կուպոնների կանխիկի և ցուցակի միջև յեղած բոլոր տարբերությունների մասին, նաև յերբ հայտնաբերվում են սխալ վճարված և մարված կուպոններ ու պարտատոմսեր, թերավճարումներ և գերավճարումներ, կազմվում է ակտ յերկու օրինակից՝ ստուգման ժամանակ ներկա յեղողների ստորագրություններով։

1–ին և 2–րդ կարգի խնայողական դրամարկղների կողմից ընդունված կուպոններն ու պարտատոմսերը դասավորում են ընդհանուր փաթեթներում՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի կողմից վճարված կուպոնների և պարտատոմսերի հետ միասին։

1–ին կամ 2–րդ կարգի խնայողական դրամարկղի ծանրոցում համաձայն ակտի հայտնաբերված կուպոնների կամ պարտատոմսերի պակասորդը և սխալ վճարված կուպոնների գումարը գրվում է ըստ տորին խնայողական դրամարկղի գանձապահի հաշվին։ Սխալ վճարված պարտատոմսերի գումարը, նաև պարտատոմսերի գերավճարումների գումարը գրվում է վերահըս–

կիչի և գանձապահի հաշվին՝ հավասար բաժիններով:

57. 1-ին և 2-րդ կարգի խնայողական դրամարկղից ստացված վճարված կուպոնների և պարտատոմսերի № 149 ձևի ցուցակը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գանձապահը պարտավոր է «Արժեքներն ընդունված են» նշումով հանձնել վերահսկիչին՝ № 61 ձևի օրդերի «Ա» բլանկի հետ միասին՝ ընդունված պարտատոմսերն ու կուպոնները № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների մուտք» սյունյակում և № 25-ա ձևի հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում «Ստացված են իր շրջանի խնայողական դրամարկղներից» տողում մուտք անելու համար:

58. Յեթե, համաձայն ակտի, ընդունելու ժամանակ հայտնաբերվում է պարտատոմսերի և կուպոնների պակասորդ կամ թե հայտնաբերվել են այնպիսի կտրոններ և պարտատոմսեր, վորոնք յենթակա չեն յեղել վճարման (չշահած պարտատոմսեր, կեղծված պարտատոմսեր և կուպոններ, պարտատոմսեր և կուպոններ, վորոնց վճարման ժամկետն անցել է, պարտատոմսեր և կուպոններ, վորոնց վճարման ժամկետը դեռ չի հասել), ապա ստացված պարտատոմսերն ու կտրոնները № 61 ձևի օրդերում («Ա» բլանկում) նշված գումարով մուտք են գրվում № 24 ձևի գործառնության օրագրում և 25—ա ձևի հավելվածում: Միաժամանակ վերահսկիչը դուրս է գրում № 53 ձևի օրդեր՝ պակասող և վճարման վոչ յենթակա կուպոնների և պարտատոմսերի արժեքը դուրս գրելու համար: № 53 ձևի օրդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների ելք» սյունյակում և № 25-ա ձևի հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում «Այլ յելք» տողում:

Վճարման վոչ յենթակա կուպոնների և պարտատոմսերի գումարով վերահսկիչը կազմում է № 54 ձևի օրդեր, գրանցելով այդ օրդերի գումարը № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների մուտք» սյունյակում և № 25-ա ձևի հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունյակում «Այլ մուտք» տողում:

Յեթե համաձայն ակտի, ընդունման ժամանակ հայտնաբերվել են կուպոնների և պարտատոմսերի ավելցուկ, ապա ստացված կուպոններն ու պարտատոմսերը № 61 ձևի օրդերում («Ա» բլանկը) նշված գումարով մուտք են արվում № 24 ձևի գործառնության օրագրում և № 25-ա ձևի հավելվածում (հոդ. 57):

Միաժամանակ վերահսկիչը դուրս է գրում № 54 ձևի օրդեր կուպոնների պարտատոմսերի ավելցուկի գումարը մուտք անելու համար: № 54 ձևի օրդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների մուտք» սյունյակում և № 25-ա ձևի հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում «Այլ մուտք» տողում:

№ 53 և 54 ձևերի օրդերներին կցվում է կուպոններն ու պարտատոմսերն ընդունելու ակտը, № 61 ձևի օրդերի վրա վերահսկիչն իր ստորագրությամբ նշում է՝ «Ընդունված է ակտով»:

59. Վճարման վոչ յենթակա կուպոններով և պարտատոմսերով վճարված գումարով, պարտատոմսերի գերավճարումների գումարով, նաև պակասող կուպոնների և պարտատոմսերի գումարով վերահսկիչը պարտավոր է կազմել № 55 ձևի առանձին օրդերներ՝ վնասները մեղավորներից գանձելու համար: Կուպոնների և պարտատոմսերի ավելցուկի գումարով վերահսկիչը նույնպես պետք է կազմի № 55 ձևի առանձին օրդեր՝ այդ կուպոնների և պարտատոմսերի արժեքը միութենական բյուջեյի յեկամուտներում հաշվեգրելու համար (այլ մուտքեր): № 55 ձևի յուրաքանչյուր օրդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Հաշվային շրջանառություններ— այլք» սյունակում: Այն պարտատոմսերը, վորոնցով ավելորդ գումարներ են վճարվել (գերավճարումներ), կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի, պահեստարանի վարիչը (գանձապահը) կնքում է վճարման նոր չտամպով և այդ չտամպում նշում է այդ պարտատոմսերով վճարման յենթակա գումարը:

Շահած պարտատոմսերի թերավճարումների գումարի համար վոչ մի օրդեր չի դուրս գրվում: Պարտատոմսերը մուտք են արվում նրանցով փաստորեն վճարված գումարով:

Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչը պարտավոր է այն ամեն դեպքում, յերբ հայտնաբերվում են շահած պարտատոմսերի թերավճարումներ, քննել այդ դեպքերը, պարզել այն պատճառները, վորոնք առաջացրել են շահումի սխալ վճարում, ստուգել թե ապահովված են արդյոք թերավճարումներ կատարած աշխատողները պատշաճ հրահանգումներով: Նայած քննության հետևանքներին՝ վարչական տուժի յենթարկել շահումների թերավճարումների մեջ մեղավոր աշխատողներին և միջոցներ ձեռք առնել նման սխալները կանխելու համար:

## VI. ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԿՈՒՊՈՆՆԵՐԸ ՇԱՀԱԾ ՅԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ՅԵՎ ՎՈՉՆՉԱՑՆԵԼԸ

60. Խնայողական դրամարկղների կողմից վճարված մարված կուպոնները, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը վոչնչացվում են այն բանից հետո, յերբ մարված կուպոններն ու պարտատոմսերը ստուգող և վոչընչացնող Հանձնաժողովը նախապես ստուգում է այդպիսիք:

Հաշվետու ամսվա ընթացքում վճարված կուպոնները, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը ուղարկվում են Հանձնաժողովին ամսական մեկ անգամ մարված դրությամբ, վոչ ուշ քան հաշվետու ամսվա հետևյալ ամսի 5-ը:

Ծանոթություն: Յեթե մարված կուպոնների և պարտատոմսերի ստուգման և վոչնչացման Հանձնաժողովին կցված են յերկու կամ մի քանի մարզերի կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղները, ապա պետաշխխնայդրամարկղների և պետվարկի մարզային վարչությունները կարող են սահմանել մարված կուպոնները և պարտատոմսերը կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների կողմից հանձնաժողովին ուղարկելու դիֆերենցավորված ժամկետներ:

61. Հանձնաժողովին ուղարկվող պարտատոմսերի և կուպոնների համար կազմվում է № 95 ձևի տեղեկագիր: Այդ տեղեկագիրը բաղկացած է յերկու մասերից:

Առաջին մասը հանդիսանում է ստուգման և վոչնչացման համար ներկայացվող կուպոնների և պարտատոմսերի ուղեկից ցուցակը: Այդ մասը լրացնում է կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղը:

Յերկրորդ մասը հանդիսանում է

կուպոնների և պարտատոմսերի ստուգման և վոչնչացման ակտը կազմում է հանձնաժողովը: Վճարված կուպոնների և պարտատոմսերի տեղեկագիրը կազմում է պահեստարանի վարիչը (գանձապահը) յերեք օրինակից՝ հետևյալ № 95 ձևով:

Կենտրոնական / Շրջանային խնայողական դրամարկղ №..................

Քաղ. . . . . .

Գ.

«. . . .» . . . 193 . . թ.

## ՏԵՂԵԿԱԳԻՐ №..................

№ . . . հաշվից ստուգման և վոչնչացման համար ուղարկվող կուպոնների և պարտատոմսերի

193 . . թ. . . . . ամսվա համար

| №№ ըստ կարգի | ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Կուպոնների գումարը | Շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսեր | | Ընդամենը (3+5) |
|---|---|---|---|---|---|
| | | | Պարտատոմսերի անվանական արժեքը | Պարտատոմսերի արժեքը շահումների հետ միասին | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 1928 թ. 11 տոկոս ներքին փոխառութ. | | | | |
| 2 | 1929 թ. անտոկոս շահող փոխառութ. | | | | |
| 3 | 1930 թ. 9 տոկոս շահող փոխառութ. | | | | |
| 4 | 1932 թ. անտոկոս շահող փոխառութ. | | | | |
| 5 | 1935 թ. » » » | | | | |
| 6 | 1938 թ. շահող փոխառություն | | | | |
| 7 | 2-րդ հնգամյակի (4-րդ տ.) փոխառ. | | | | |
| 8 | ԽՍՀ Միության Պաշտպանության Ամրապնդման փոխառություն . . | | | | |
| 9 | 3-րդ հնգամյակի (1-ին տ) փոխառ. | | | | |
| 10 | ..................... | | | | |
| | Ընդամենը . . . | | | | |

Կենտրոնական / Շրջանային խնայողական դրամարկղի վարիչ՝

Գլխավոր հաշվապահ՝

Պահեստարանի վարիչ (գանձապահ)



## ԱԿՏ №..................

Վոչնչացման համար ուղարկված կուպոնների և պարտատոմսերի:

« . . » . . . . 193 . . թ. Պետաշխնայդրամարկղների և պետվարկի . . . . . . . . . . . . . . . . . . .

(վարչության անվանումը)

վարչության կից մարված կուպոնների և պարտատոմսերի ստուգման և վոչնչացման հանձնաժողովը հետևյալ կազմով՝ հանձնաժողովի նախագահ՝ ընկ. . . . . . . . . նախագահ տեղակալ՝ ընկ. . . .

և հանձնաժողովի անդամներ՝ պետաշխնայդրամարկղների և պետվարկի վարչության ներկայացուցիչ . . . . . . . . . . .

(պաշտոնն ու ազգանունը)

հասարակական կազմակերպություններից . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

(ձեռնարկությունների և հիմնարկությունների անվանումը և ազգանունները)

պաշտոնեյական անձերի ներկայությամբ . . . . . . . . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

(նշվում է պաշտոնն ու ազգանունը)

կատարեց կուպոնների և պարտատոմսերի վերահաշվում և ստուգում:

Ստուգման հետևանքով հանձնաժողովը պարզել է.

1. Ներկայացված են կուպոններ և պարտատոմսեր, համաձայն տեղեկագրի (6-րդ սունյակի հանրագումարը), ընդամենը գումարով . . . . . . .

2. Առկա եյին վոչնչացման յենթակա կուպոններ և պարտատոմսեր ընդամենը գումարով*) . . . . . . . . . . . . . . . . . .

Կուպոններն ու պարտատոմսերը ստուգելու ժամանակ հայտնաբերված պակասորդները, ավելցուկները, սխալ վճարումները և մյուս թերությունները նշված են այս ակտի № . . առանձին հավելվածում (ձև № 95 ա):

Վոչնչացման յենթակա կուպոններն ու պարտատոմսերը փաթեթ–

*) Յեթե կուպոններն ու պարտատոմսերն ստուգելիս հայտնաբերվել են պակասորդներ, ավելցուկներ, սխալ վճարումներ և այլ թերություններ, վորոնց հետևանքով վոչնչացման յենթակա արժեքների գումարը ճշտությամբ չի համապատասխանում տեղեկագրի արժեքների գումարին, ապա բոլոր հայտնաբերված թերությունները հանձնաժողովը նշում է № 95 ձևի ակտի № 95 ա ձևի առանձին հավելվածում:

ված են . . . . ծրարներում և դրված են № . . պարկի մեջ, որը կնքված է հանձնաժողովի նախագահի և պահեստարանի վարիչի ու հանձնաժողովի անդամների № № . . . . . . կնիքներով:

Խնայողական դրամարկղին վերադարձնելու չնմացած կուպոններն ու պարտատոմսերը փաթեթված են . . . . . . ծրարներում:

Հանձնաժողովի առանձին դիտողությունները . . . . . . . .

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի անդամներ՝

Մակագրություն արժեքները ոչնչացնելու մասին

№ . . պարկը մինչև իր բացումն անվնաս էր և պարկի վրայի Հանձնաժողովի նախագահի, պահեստարանի վարիչի և հանձնաժողովի անդամների № № . . . . կնիքներն անխախտ էին:

Ծրարների մեջ դրված կուպոններն ու պարտատոմսերը . . . . . . . .

ռուբլի . . . կոպեկ . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

(բառերով)

գումարով՝ ոչնչացված են «. . .» . . . . . . ամսի 193 . . թ.:

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի անդամներ՝

62. № 95 ձևի տեղեկագիրը կազմվում են հետևյալ կարգով:

Ամսվա ընթացքում վճարված բոլոր կուպոնները, որոնք փաթեթված ձևով (100-ական թերթ) պահվում են պահեստարանում, դասավորվում են փաթեթներում ըստ առանձին փոխառությունների: Յուրաքանչյուր փաթեթ (1000 թերթ) ծածկվում է խավաքարտի մակագրով (накладка), որի վրա գրվում է փոխառության անունը, կուպոնների թերթերի քանակը և գումարը, նաև կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի անունն ու համարը: Մակագրի վրա պարզ կերպով ստորագրում է փաթեթները դասավորող գանձապահը:

Այդ նույն կարգով են դասավորվում փաթեթներում ըստ առանձին փոխառությունների և մասերի՝ չահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը, ընդորում մակագրերի վրա նշվում է փոխառության և մասի անունը, թերթերի քանակը, արժողությունը, պարտատոմսերի անվանական գումարը և պարտատոմսերով վճարված գումարը:

Ստուգման և ոչնչացման համար ուղարկվող պարտատոմսերի և կուպոնների փաթեթների բանդերոլների և մակագրերի լրացման նմուշը՝



Բանդերոլ

Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառություն

անպայման շահող մաս

100 թերթ × 50 ռուբ.=5000 ռուբլի

վճարված է . . 8250 ռուբլի

Գանձապահ՝ ..................................................

(Ստորագրություն)

2 ապրիլի, 1938 թ.

Մակագիր

Հոկտեմբերյան շրջխնայդրամարկղ

№ 3172

Յերկրորդ Հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառություն

անպայման շահող մաս

976 թերթ × 50 ռուբ. = 48800 ռուբլի

վճարված է . . . . . 75400

գանձապահ ____________________

(ստորագրություն)

ապրիլի 1938 թ.

Յուրաքանչյուր փոխառության վճարված կուպոնների ընդհանուր գումարը, համաձայն մակագրերի վրայի մակագրությունների գրվում է № 95 ձևի տեղեկագրի 3-րդ սյունյակում, որից հետո դուրս է բերվում այդ սյունյակի հանրագումարը: Յուրաքանչյուր փոխառության պարտատոմսերի վճարված գումարները, համաձայն փաթեթների մակագրերի վրայի մակագրությունների, գրանցվում է № 95 ձևի տեղեկագրի 5-րդ սյունյակում:

№ 95 ձևի տեղեկագրի 3 և 5 սյունյակների հանրագումարների գումարը գրանցվում է այդ նույն տեղեկագրի 6-րդ սյունյակում «ընդամենը» տողում: № 95 տեղեկագրի 6-րդ սյունյակում հանրագումարը պետք է հավասար լինի հաշվետու ամսվա ընթացքում վճարված կուպոնների և պարտատոմսերի ընդհանուր գումարին՝ որը ցույց է տրված մնացորդով առ 1-ն հետևյալ ամսի՝ պահեստարանի № 12 ձևի մատյանում և գործառնության օրագրի՝ № 25-ա հավելվածի «Վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում:

Ստուգելով վճարված կուպոնների և պարտատոմսերի ընդհանուր գումարը, պահեստարանի վարիչը (գանձապահը) հաշվում է յուրաքանչյուր փոխառության գումարները, որպիսիք ցույց են տրված № 95 ձևի տեղեկագրի 3 և 5-րդ սյունյակներում, և յուրաքանչյուր փոխառության ընդհանուր գումարներն առանձին գրանցում է 6-րդ սյունյակում: Այդ հանրագումարների ընդհանուր գումարը պետք է հավասար լինի 8-րդ սյունյակում «Ընդամենը» տողում նախկինում ցույց տրված գումարին:

Հավասարեցնելով առանձին փո-

խոտությունների վճարված ընդհանուր գումարների գրանցման ճշտության մեջ, պահեստարանի վարիչը (գանձապահը) համաձայն փաթեթների վրայի մակագրությունների՝ № 9 ձևի տեղեկագրի 4-րդ սյունակում գրանցում է վճարված շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի անվանական արժեքը:

63. Պահեստարանի վարիչի (գանձապահի) կողմից կազմված № 95 ձևի տեղեկագիրն ստուգում է հաշվապահությունը, վորից հետո ցուցակի բոլոր օրինակները ստորագրում են խնայողական դրամարկղի վարիչը, գլխավոր հաշվապահը և պահեստարանի վարիչը (գանձապահը):

Տեղեկագրի մեկ օրինակը հանձնըվում է հաշվապահությանը՝ կուպոններն ու պարտատոմսերն ստուգող և վոչնչացնող հանձնաժողովին ուղարկելու համար, յերկրորդ օրինակը հանձնվում է պահեստարանի վարիչին (գանձապահին) կտրոնների և պարտատոմսերի հետ միասին ուղարկելու համար, իսկ յերրորդ օրինակը հանձնվում է վերահսկիչին՝ որդեր կազմելու համար:

64. Ստուգման համար յեղած կուպոնների և պարտատոմսերի փաթեթները պահեստարանի վարիչը (գանձապահը) ծանրոց է շինում խնայողական դրամարկղի վարիչի և գլխավոր հաշվապահի ներկայությամբ: Յուրաքանչյուր տեղեկագրի համար պատրաստվում է առանձին ծանրոց, վորի մեջ դրվում է տեղեկագրի մեկ օրինակը:

Նախ քան կուպոններն ու պարտատոմսերը ծանրոց պատրաստելը խնայողական դրամարկղի վարիչը և գլխավոր հաշվապահը հավաստիանում են թե մակագրերների վրայի գրությունները լրիվ չափով համապատասխանում են արդյոք տեղեկագրի գրանցումների հետ և առանց փաթեթներն ու մակագրերները բացելու, ընտրովի կարգով ստուգում են կուպոնների և պարտատոմսերի մարման ճշտությունը:

Առաքվող մարված կուպոններն ու պարտատոմսերն ապահովագրվում են մինիմալ գնահատումով:

Ծանրոցի կամ ծրարի վրա մակագրվում է՝ «մարված կուպոններ ու պարտատոմսեր» և նշվում է ծանրոցի մեջ դրված № 95 ձևի տեղեկագրի համարը:

65. Ստուգման և վոչնչացման համար ուղարկվող վճարված կուպոնների նաև պարտատոմսերի համար վերահսկիչը կազմում է № 53 ձևի որդեր: Որդերը կազմվում է հաշվապահության կողմից ստուգված № 95 ձևի տեղեկագրի հիման վրա: Որդերին կցվում է տեղեկագրի մեկ օրինակը՝ որվա հաշվետվության հետ հաշվապահությանը հանձնելու համար:

№ 53 ձևի որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների յելք» սյունակում և 25—ա ձևի հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունակում «Ուղարկված և խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում:

66. Մոսկվայի Խորհրդի և Գյուղատնտեսության տրակտորիզացիային օժանդակող փոխառության շահած և մարման խաղարկությունով անցած վճարված պարտատոմսերն ուղարկվում է մարված կուպոններն ու պարտատոմսերն ստուգող և վոչնչացնող հանձնաժողովին վոչ ուշ, քան հաշվետու ամսվա հետևյալ ամսի 5-ը՝ № 95 ձևի առանձին տեղեկագրով:

№ 95 ձևի տեղեկագիրը կազմում է պահեստարանի վարիչը (գանձապահը) և ստուգում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի գլխավոր հաշվապահը:

Մոսկվայի Խորհրդի և Գյուղատնտեսության տրակտորիզացիային օժանդակող փոխառության ա-



տաքվող պարտատոմսերի գումարով գույս և գրվում յուրաքանչյուր փոխառության համար առանձին № 53 ձևի որդեր: Որդերների գումարները գրանցվում են № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների յելքի սյունակում և № 25—ա ձևի հավելվածում»: «Զանազան հիմնարկություններին և անձերին պատկանող արժեքներ» հատվածի առանձին սյունակում «Ուղարկված և խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում:

## VII. ՎՃԱՐՎԱԾ ԿՈՒՊՈՆՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՒ ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ԱԿՏԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՄ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿ'ԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻ ԿՈՂՄԻՑ

67. Մարված կուպոնների և պարտատոմսերի ստուգման և վոչնչացման հանձնաժողովը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին վերադարձնում է պատշաճորեն ձևակերպված № 95 ձևի տեղեկագրի ակտի մեկ օրինակը:

Յեթե կուպոնների և պարտատոմսերի ստուգման ժամանակ հանձնաժողովը հայտնաբերել է ավելացուկ կամ պակասորդ, նաև պարտատոմսերի և կուպոնների սխալ վճարումների, կեղծված և հարմարեցրած կուպոններ ու պարտատոմսեր և այլ թերություններ, վորոնց հետևանքով տարբերություններ են հայտնաբերվել վոչնչացման յենթակա կուպոնների ու պարտատոմսերի գումարի ու № 95 ձևի տեղեկագրի գումարի միջև, ապա այդ բոլոր սխալներն ու տարբերությունները հանձնաժողովը նշում է ակտի № 95—ա առանձին հավելվածում, վորն ուղարկվում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին՝ № 95 ձևի տեղեկագրի ակտի հետ:

Հանձնաժողովից ստացված ակտը և նրա հավելվածը հանձնվում են անմիջականորեն գլխավոր հաշվապահին, վորը պարտավոր է կուպոնները և պարտատոմսերը հանձնաժողովի կողմից ստուգելու արդյունքների մասին տեղյակ դարձնելու կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի վարիչին: Հանձնաժողովի ակտի (և նրա հավելվածի) բովանդակության հետ ծանոթանալը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչն ու գլխավոր հաշվապահը պարտավոր են հաստատել ստորագրելով այդ փաստաթղթերը:

Յեթե ակտում և նրա հավելվածում հանձնաժողովը նշել է, վոր ամփոփ տեղեկագրի դիմաց սխալներ և տարբերություններ կան, ապա գլխավոր հաշվապահը կատարում է դեֆեկտավոր և սխալ վճարված պարտատոմսերի նաև կուպոնների հաշվարկում և այդ հաշվարկումները ձևակերպում է որդերներով: Որդերները կարող են կազմել հաշվապահության աշխատակիցը կամ գործառնության մասի վերահսկիչը՝ գլխավոր հաշվապահի ղեկավարությամբ:

68. Կուպոնների և պարտատոմսերի պակասորդի ու ավելցուկի առկայության դեպքում, համաձայն Հանձնաժողովի ակտի № 95—ա ձևի հավելվածի, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչը հենց նույն որը նշանակում է վճարված կուպոնների և պարտատոմսերի ստուգում՝ խնայողական դրամարկղի պահեստարանում:

Պահեստարանի ստուգման արդյունքների մասին կազմվում է ակտ խնայողական դրամարկղի վարիչի և դրամարկղային աշխատողների ստորագրություններով, վորոնք ներկա յեն յեղել ստուգման ժամանակ:

Ակտում նշվում է պահեստարանի կատարված ստուգման հիմքը (հանձնաժողովի ակտի և այդ ակտի № 95—ա հավելվածի վրա հիմնվելը)։

Պահեստարանի ստուգման ակտը հանձնաժողովի ակտի և նրա հավելվածի հետ միասին հանձնվում է գլխավոր հաշվապահին՝ համապատասխան որդերները դուրս գրելու համար։

69. Պահեստարանի ստուգման արդյունքները ձևակերպվում են հետևյալ կարգով՝

ա) Յեթե հանձնաժողովը հայտնաբերել է ավելորդ կտրոններ կամ պարտատոմսեր, իսկ պահեստարանի ստուգումը պարզել է հենց այդ կուպոնների և պարտատոմսերի պակասորդը, ապա ավելորդ ուղարկված կուպոնների և պարտատոմսերի գումարը վերահսկիչը յելք է դուրս գրում № 53 ձևի որդերով՝ որդերի գումարը գրանցվում է № 24 գործառնության որագրում «Արժեքների յելք» սյունյակում և № 25—ա ձևի հավելվածում «Վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում «Ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում։

Այն դեպքերում, յերբ պահեստարանի ստուգումով չի հայտնաբերվի այդ կուպոնների և պարտատոմսերի պակասորդը և, հետևապես, խնայդրամարկղի ծանրոցում ավելորդ կուպոնների և պարտատոմսերի առկայության պատճառները չի պարզվի, հանձնաժողովին ավելորդ ուղարկված կուպոններն ու պարտատոմսերը մուտք են լինում նրանով վճարված գումարով № 54 ձևի որդերով և միաժամանակ յելք են դուրս գրվում այդ նույն գումարով № 53 ձևի որդերով։ № 54 և 53 ձևերի որդերների գումարները գրանցվում են № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների մուտք» և «Արժեքների յելք» սյունյակներում և № 25—ա ձևի հավելվածում «Վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում «Այլ մուտք» և «Ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների ու հաճախորդների հասցեներով» տողում։ Ավելորդ ուղարկված կուպոնների և պարտատոմսերի գումարով կազմվում է № 55 ձևի որդեր՝ այդ գումարը միութենական բյուջեի յեկամուտում փոխանցելու համար, վորպես այլ մուտքեր։ № 55 ձևի որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության որագրում «Հաշվային շրջանառություններ—այլք» սյունյակում։

բ) Յեթե հանձնաժողովի ակտի հավելվածում նշված է կուպոնների և պարտատոմսերի հայտնաբերված պակասորդը, իսկ պահեստարանում ստուգումով կպարզվի այդ խսկ կուպոնների և պարտատոմսերի ավելցուկ, ապա այդ ավելցուկը վորպես հանձնաժողովին սխալմամբ չուղարկված, վերահսկիչը մուտք է անում № 54 ձևի որդերով՝ նրանց փաստորեն վճարված գումարով։ № 54 ձևի որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների մուտք» սյունյակում և № 25—ա ձևի հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունյակում, «Այլ մուտք» տողերում։

Այն դեպքերում, յերբ պահեստարանի ստուգումով չի հայտնաբերվի այն կուպոնների և պարտատոմսերի ավելցուկը, վորպիսիք նշված են ակտի հավելվածում վորպես պակասորդներ, և հետևապես, կուպոնների պարտատոմսերի պակասորդը կհաստատվի պահեստարանի ստուգման ակտով, ապա պակասորդի գումարով կազմվում է № 55 ձևի որդեր՝ վնասները գանձապահից (պահեստարանի վարիչից) գանձելու համար։ Որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության որագրի «Հաշվային շրջանառություններ— Այլ» սյունյակում։

70. Հանձնաժողովի կողմից վերադարձված այն սխալ վճարված պարտատոմսերն ու կուպոնները, վորպիսիք կարիք չկա էքսպերտիզայի համար պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության ուղարկելու (ժամկետից առաջ վճարված կուպոնները, չշահած և մարման խաղարկությունով չանցած պարտատոմսեր) վերահսկիչը մուտք է անում անվանական գումարով № 54 ձևի որդերով։ № 54 ձևի որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների մուտք» սյունակում և № 25—ա հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Այլ մուտք» տողում։

Սխալ վճարված գումարներն այն աշխատակիցներից գանձելու համար, վորոնք մեղավոր են այդ կուպոնների ու պարտատոմսերի սխալ վճարման գործում, կազմվում է № 55 ձևի որդեր՝ փաստորեն վճարված գումարով։ № 55 ձևի որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության որագրում «Հաշվային շրջանառություններ—այլք» սյունակում։

Սխալ վճարված, այսինքն՝ 1929 թ., 1930 թ., 1932 թ. և 1935 թ. (մինչ 1939 թ. մարտի 1-ը) պետական ներքին շահող փոխառությունների և 1938 թ. շահող փոխառության չշահած պարտատոմսերի համար՝ մեղավորներից գանձվում է ավելորդ վճարված գումարները։ Պարտատոմսերը գնվում և հաշվեգրվում են ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյում, իսկ նրանց արժեքը գործադրվում է ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի հաշվին սխալ կատարված վճարումները ծածկելու համար։

Այդ գործառնությունը ձևակերպելու համար կազմվում են որդերներ՝

ա) մեկ որդեր № 55 ձևի— մեղավոր անձերից գանձելու յենթակա ավելորդ վճարված գումարի համար, և մյուսը № 55 ձևի որդեր ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյում գնվող պարտատոմսերի արժեքի համար։ Այդ որդերների գումարները գրանցվում են № 24 ձևի գործառնության որագրում «Հաշվային շրջանառություններ— այլ» սյունակում։

բ) № 54 ձևի որդեր— գնվող և ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյում հաշվեգրվող պարտատոմսերի անվանական արժեքի համար։ Այդ որդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության որագրում «Արժեքների մուտք» սյունակում և № 25-ա հավելվածում «ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպո» հատվածում (համապատասխան փոխառության սյունակը) «Այլ մուտք» տողում։

71. Ժամկետից առաջ վճարված կուպոնները պահվում են պահեստարանում փոխանցիկ արժեքներում մինչև նրանց վճարման ժամկետի հասնելը և աշխատակիցներին չեն վերադարձվում։

Կտրոնների սխալ վճարված գումարները գանձվում են գանձապահից, իսկ պարտատոմսերի սխալ վճարված գումարները— գործառնությունը ձևակերպած վերահսկիչից և գանձապահից, հավասար բաժիններով։ Մեկ հաստիքային աշխատող ունեցող խնայողական դրամարկղներում կտրոնների և պարտատոմսերի սխալ վճարված գումարները գանձվում են վերահսկիչից։

Այն դեպքում, յերբ չի կարելի պարտատոմսերի վրա կնքված շտամպով վորոշել, թե խնայդրամարկղի աշխատողներից ով է մեղավոր սխալ վճարում կատարելու գործում, կամ հանձնաժողովի ակտի ստացման մոմենտին խնայողական դրամարկղի աշխատողները (վերահսկիչն ու գանձապահը) աշխատանքի մեջ չեն գտնվում,— սխալ վճարված գումարներն ամբողջությամբ գանձվում են կենտրոնական կամ շրջանային խնայդրամկղի պահեստարանի վարիչից (գանձապահից), վորն այդ արժեքներն ընդունել է այդ յենթակա խնայողական դրամարկղից։

Պահեստարանում պահվող ժամկետից առաջ վճարված կտրոնները, նրանց

վճարման ժամկետները լրանալուն պես, վճարվում են ընդհանուր կարգով և մեղավոր աշխատակիցներից պահված գումարները հատուցվում են նրանց: Դրա համար վերահսկիչը կազմում է № 53 ձևի օրդեր՝ կտրոնները փոխանցիկ արժեքներից դուրս գրելու համար, № 54 ձևի օրդեր՝ կտրոնները նրանցով փաստորեն վճարվող գումարով մուտք անելու համար և № 55 ձևի օրդեր՝ այդ իսկ գումարով՝ հաշվապահության կողմից այն աշխատակիցների հետ հաշվարկումներ կատարելու համար, որոնց հաշվին կատարվել էր պահումը: №№ 53, 54 և 55 ձևերի օրդերների գումարները գրանցվում են գործառնության օրագրում «Արժեքների ելք» Արժեքների մուտք» և «Հաշվային չրջանառություններ— այլք» սյունակներում համապատասխանաբար: № 25—ա ձևի հավելվածում № 53 ձևի օրդերի գումարը ցույց է տրվում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Այլ ելք» տողում, իսկ № 54 ձևի օրդերի գումարը—«վճարված տիրաժային արժեքներ» սյունակում «Այլ մուտք» տողում:

72. Մարման խաղարկությունով չանցած ժամկետից առաջ վճարված պարտատոմսերը, նաև կոլեկտիվ բաժնեգրության կարգով իրացված փոխառությունների սխալ վճարված չշահած պարտատոմսերը պահվում են պահեստարանում փոխանցիկ արժեքներում մինչև մեղավորների կողմից սխալ վճարված գումարների լիակատար հատուցումը: Այդ գումարների հատուցումից հետո՝ գլխավոր հաշվապահը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչի ստորագրությամբ կարգադրում է գործառնության մասին՝ փոխանցիկ արժեքներում պահվող պարտատոմսերը փոխանակել այդ իսկ փոխառության, մասի և արժողության պարտատոմսերով ԽՍՀՄ ՖԺԿ դեպոյից:

Փոխանակման համար ընդունված պարտատոմսերի վրա վերահսկիչը մակագրություն է անում հետևյալ բովանդակությամբ՝ «Այս սխալ վճարված պարտատոմսը հաշվեգրըրվում է ԽՍՀՄ ՖԺԿ դեպոյում և փոխանակումն այն լիարժեք պարտատոմսի, որը տրվել է . . . .

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

(Խնայդրամարկղի համարը)

Խնայդրամարկղի աշխատակից . . . . . . . . . . . . . .

(աշխատակցի ազգանունը և պաշտոնը) վորն այդ պարտատոմսով սխալ վճարված գումարը հատուցել է խնայդրամարկղին: Խնայդրամարկղի վարիչ (ստորագրություն), գլխավոր հաշվապահ (ստորագրություն) և վերահսկիչ (ստորագրություն), խնայդրամարկղի կնիքը և փոխանակման ժամանակը»:

Սխալ վճարված պարտատոմսի սխալ վճարված գումարը հատուցելուց հետո այդ պարտատոմսը դուրս է գրվում № 53 ձևի օրդերով: Այդ օրդերի գումարը վերահսկիչը գրանցում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների ելք» սյունակում և № 25—ա ձևի հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ սյունակում» «այլ ծախսեր» տողում: Սխալ վճարված գումարը հատուցած աշխատակիցը № 53 ձևի օրդերի վրա ստորագրում է ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյի վճարածի փոխարեն նոր պարտատոմս ստանալու համար:

Սխալ վճարված պարտատոմսերը ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյի ուրիշ պարտատոմսերով փոխանակելն օրդեր-



ներով չի ձևակերպվում:

ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյում փոխանակման կարգով հաշվեգրված պարտատոմսերը, որոնց վրա մարման նշանները սխալ են արված, ուղարկվում են պետնոտիչ № 147 ձևի ուղեկցող ցուցակի հետ «Թերարժեք» («неполноценные») հատվածով, ցուցակում նշվում է պարտատոմսերի վնասման բնույթն ու պատճառը, նաև հաստատվում է նրանց արժեքի գանձումն այն անձերից, որոնք մեղավոր են պարտատոմսերը սխալ վճարելու գործում:

73. Շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերով ավելորդ վճարված գումարները, նաև սխալ վճարված ժամկետանց և հանձնաժողովի վորոշմամբ անվճարելի կուպոնների և պարտատոմսերի արժեքն ամբողջությամբ գանձվում է մեղավորներից: Այդ գումարների համար վերահսկիչը դուրս է գրում № 55 ձևի օրդեր՝ գրանցելով այն № 24 գործառնության օրագրում «Հաշվային չրջանառություններ— այլ» տողում:

74. Էքսպերտիզայի համար պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանն ուղարկելու համար հանձնաժողովի կողմից վերադարձրած վճարված, չինծու և կեղծ կտրոններն ու պարտատոմսերը, նաև իրանց վճարելիության մեջ կասկածներ հարուցող կտրոններն ու պարտատոմսերը վերահսկիչը մուտք է անում նրանցով վճարված գումարով՝ № 54 ձևի օրդերով: Օրդերի գումարը գրանցվում է № 24 ձևի գործառնության օրագրում «Արժեքների մուտք» սյունակում և 25—ա ձևի հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Այլ մուտք» տողում: Չինծու և կեղծ կտրոններով ու պարտատոմսերով փաստորեն վճարված գումարը մեղավոր աշխատակիցներից գանձելու համար վերահսկիչը դուրս է գրում № 55 ձևի օրդերը՝ գրանցելով գործառնության օրագրում «Հաշվային չրջանառություններ— այլ» սյունակում:

Կեղծ և չինծու կտրոններն ու պարտատոմսերը, նաև իրենց վճարելիության մեջ կասկածներ հարուցող կտրոններն ու պարտատոմսերը սահմանված կարգով ուղարկվում են պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը՝ էքսպերտիզայի համար (33 և 37 հոդ.):

Էքսպերտիզայի համար ուղարկվող կտրոնների և պարտատոմսերի գումարով վերահսկիչը կազմում է № 53 ձևի օրդեր, որը գրանցվում է ձև № 24 գործառնության օրագրում «Արժեքների ելք» սյունակում և № 25—ա հավելվածում «Այլ փոխանցիկ արժեքներ» սյունակում «Ուղարկված է խնայդրամարկղների, այլ հիմնարկությունների և հաճախորդների հասցեներով» տողում: Էքսպերտիզայի համար՝ Գլխավոր Վարչությանն ուղարկվող կտրոնների և պարտատոմսերի № 99 ձևի ցուցակում նշվում է նրանցով վճարված գումարը մեղավորների հաշվին գրելու մասին: Ուղարկվող պարտատոմսերն ապահովագրվում են այդ պարտատոմսերով վճարված գումարի չափով:

Պետաշխխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության կողմից վճարելի ճանաչված կտրոնների և պարտատոմսերի համար աշխատակիցներից գանձված գումարները հաշվապահությունն ամբողջությամբ վերադարձնում են նրանց Գլխավոր վարչությունից փոխադրությունն ստանալուն պես:

75. Չինծու համարներ ունեցող պարտատոմսերով սխալմամբ վճարված գումարները (անվանական արժեքը և շահումների գումարները) մեղավորների կողմից լրիվ չափով հատուցելուց հետո, կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներն իրենց հանրապետական, յերկ-

րային, մարզային վարչության միջոցով հայտնում են այդ մասին պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը՝ նշելով՝

ա) Թե չինծու համարներով պարտատոմսերին ինչ ուղեկցող փաստաթղթերով են (ցուցակի զատան և համարը) ուղարկվել Գլխավոր Վարչությանը էքսպերտիզայի համար:

բ) Վոր պարտատոմսերի համար են հատուցվել վնասները (փոխառության և նրա մասի անունը, պարտատոմսերի արժողությունը, սերիաներն ու համարները և պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը):

գ) Յերբ և ինչ գումար են հատուցել այն աշխատողները, վորոնք չինծու համարներ ունեցող պարտատոմսերով սխալ վճարումներ են արել:

Այդ տեղեկությունները պետք է ստորագրեն կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղների վարիչը և գլխավոր հաշվապահը և ներկայացվում են Գլխավոր վարչությանը միութենական հանրապետությունների պետաշխնայդրամարկղների և պետվարկի վարչությունների յեզրակացություններով:

Գլխավոր վարչությունն ստանալով այդ տեղեկությունները, նյութերը քննում է ըստ էության և Յերկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառության, ԽՍՀՄ-ի Պաշտպանության Ամրապնդման փոխառության և Յերրորդ Հնգամյակի (առաջին տարվա) փոխառության պարտատոմսերի նկատմամբ՝ լուծում է չինծու համարներ ունեցող պարտատոմսերի շահումների վճարում թույլ տված աշխատողներին անվանական արժեքով պարտատոմսերը տալու հնարավորության հարցը: ԽՍՀՄ-ի ՑԺԿ-ի դեպոյի համապատասխան փոխառության պարտատոմսեր տալն այդ աշխատողներին՝ կատարվում է պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության սահմանված թույլտվություններով:

1938 թ. Ներքին Շահող Փոխառության վճարված պարտատոմսերի (չինծու համարներով) համար՝ վերևում սահմանված տեղեկությունները ներկայացվում են Գլխավոր վարչությանը այն բանից հետո, յերբ խնայողական դրամարկղների աշխատակիցները հատուցում են շահումների գումարները: Այդ պարտատոմսերի անվանական արժեքը փոխադրվում է Գլխավոր վարչության կողմից և գործադրվում է № 87 հաշվի վնասի մի մասը մարելու համար:

Անկախ սխալ վճարված գումարը գանձելուց՝ կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղների վարիչները, նաև խնայողական դրամարկղների վարչությունների պետերը պետք է մանրազնին կերպով ստուգեն չինծու համարներ ունեցող պարտատոմսերի շահումների վճարման դեպքերը և վճռեն նման վճարումներ թույլ տվող աշխատողներին աշխատանքի մեջ թողնելու հնարավորության հարցը:

76. Յեթե Հանձնաժողովը նշել է շահած պարտատոմսերի գումարների թերավճարումներ,— կենտրոնական կամ շրջանային խնայդրամարկղի վարիչը պետք է հայտնաբերի այդ գործում մեղավոր աշխատողներին և պարզի, թե ինչու թույլ տրված թերավճարումները չեն հայտնաբերվել մինչև պարտատոմսերը հանձնաժողովին ներկայացնելը: Շահած պարտատոմսերի գումարները թերավճարելու գործում մեղավոր աշխատողները, նաև այն աշխատողները վորոնք իրեն ժամանակին չեն հայտնաբերել նման դեպքերը, յենթարկվում են վարչական տույժի՝ մինչև աշխատանքից հեռացնելը և միջոցներ են ձեռք առնվում նման սխալները հետագայում կանխելու համար:

Շահած պարտատոմսերի գումարների թերավճարումը որդերներով չի ձևակերպվում:

Հանձնաժողովի ակտի հավելվածում նշված շահումների պակաս մնացած չվճարված գումարները տրվում են պարտատոմսատերերին միմիայն ամեն անգամ պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր Վարչության հատուկ թույլտվությամբ:

77. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի կողմից վերադարձվող Մոսկվայի Խորհրդի փոխառության և գյուղատնտեսության տրակտորիզացիային ոժանդակող փոխառության պարտատոմսերի ստուգման և վոչնչացման ակտերի ձևակերպումը կատարվում է այն կարգի համեմատ, վորը սահմանված է պետական ներքին փոխառությունների պարտատոմսերի համար, այսինքն՝

ա) Յեթե Հանձնաժողովի ակտի № 95-ա ձևի հավելվածում գրանցումներ կան հայտնաբերված պակասորդների մասին, ապա այդ իսկ պարտատոմսերի ավելցուկները պահեստարանում բացակայելու դեպքում՝ պակասորդի գումարը № 55 ձևի որդերով գրվում է մեղավոր գանձապահի հաշվին:

բ) Այդ նույն կարգով է գանձվում մեղավոր աշխատակիցներից այն գումարը, վորպիսին վճարել է չշահած պարտատոմսերով:

Չշահած պարտատոմսերը մուտք են արվում անվանական արժեքով՝ № 54 ձևի որդերով և ցույց են տրվում № 25-ա ձևի հավելվածում «Զանազան հիմնարկությունների և անձանց պատկանող արժեքեր» հատվածի առանձին սյունակում «Այլ մուտք» տողում:

Պարտատոմսերի վրա մակագրվում է վոր սխալ վճարված գումարների պակասորդը դրվել է մեղավորների հաշվին և այդ մակագրությունը վավերացվում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչի և գլխավոր հաշվապահի ստորագրություններով և կնիքով: Չշահած պարտատոմսերը նորից ուղարկվում են հանձնաժողովին՝ հաշվետու ամսվա ընթացքում մյուս վճարված պարտատոմսերի հետ միասին վոչնչացնելու համար:

## VIII. ԿՏՐՈՆՆԵՐԻ, ՇԱՀԱԾ ՅԵՎ ՄԱՐՄԱՆ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՎ ԱՆՑԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

78. Կտրոնների, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի համար խնայողական դրամարկղների կողմից վճարված գումարները կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը հաշվի յե առնում «կտրոնների, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարում» № 24 հաշվի դեբետում:

№ 24 հաշվի պահանջում անց են կացվում պարտատոմսերով և կտրոններով սխալ վճարված գումարները, ԽՍՀՄ-ի ՑԺԿ-ի դեպոյի պարտատոմսերին կից պակասող կտրոնների արժեքը, նաև պահեստարանում պակասող կտրոններով և պարտատոմսերով վճարված գումարները:

№ 24 հաշվով հաշվապահությունը տանում է № 23 ձևի առանձին մատյան յուրաքանչյուր որդերի ընդհանուր գումարներով, առանց ստորաբաժանելու ըստ առանձին փոխառությունների:

Տարվա վերջում № 24 հաշիվը փակվում է այդ հաշվի մնացորդը փոխանցելով № 28 հաշվի դեբետում:

79. Վճարված կտրոններն ու պարտատոմսերը, նախ քան այդպիսիք ստուգման և վոչնչացման համար հանձնաժողովին ուղարկելը, վճարված գումարով հաշվի յեն առնվում «վճարված կտրոններ, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսեր» № 210 արտաբալանսային հաշվում:

Այդ հաշիվը ստորաբաժանվում է չորս յենթահաշվի:

Յենթահաշիվ № 1— «Խնայդրամարկղներում»,

յենթահաշիվ № 2— «Ցենթակա խնայդրամարկղներում»,

յենթահաշիվ № 3— «Ճանապարհին»,

յենթահաշիվ № 4— «8—տոկոս. փոխառության յեկամուտներն ստանալու ստացականներ»:

№ 1 յենթահաշվով հաշվի յեն առնվում այն վճարված կտրոններն ու պարտատոմսերը, վորոնք ստացվում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի պահեստարանում՝ յենթակա խնայողական դրամարկղներից, նույն թվում և գործառնության մասից: Ինքնուրույն պահեստարան չլինելու դեպքում՝ № 1 յենթահաշվով հաշվի յեն առնվում գործառնության մասի կողմից վճարված և յենթակա խնայողական դրամարկղներից ընդունված կտրոններն ու պարտատոմսերը: № 1 յենթահաշվի յելքով դուրս են գրվում ստուգման և վոչնչացման համար Հանձնաժողովին ուղարկված կտրոններն ու պարտատոմսերը:

№ 2 յենթահաշվով հաշվի յեն առնվում այն վճարված կտրոններն ու պարտատոմսերը, վորոնք գտնվում են յենթակա խնայողական դրամարկղներում (նույն թվում գործառնության մասում, յեթե կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին կից կա ինքնուրույն պահեստարան) մինչև այդ կտրոններն ու պարտատոմսերը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին ուղարկելը: Այդ յենթահաշվի յելքով դուրս են գրվում յենթակա խնայողական դրամարկղների կողմից կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին ուղարկված վճարված կտրոններն ու պարտատոմսերը:

№ 3 յենթահաշվով հաշվի յեն առնվում ճանապարհին գտնվող վճարված կտրոններն ու պարտատոմսերը, վորոնք յենթակա խնայողական դրամարկղի կողմից ուղարկվել են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին: Այդ կտրոնների և պարտատոմսերի յելք դուրս գրելը № 3 յենթահաշվով կատարվում է այդպիսիք կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի կողմից ստացվելուց հետո:

80. Վճարված կտրոնների և պարտատոմսերի հաշվառումը № 210 հաշվի № 1 յենթահաշվով բացի շրջանառությունների № 25—ր ձևի մատյանից, տարվում է անձնական հաշիվներով հետևյալ ձևով:

| Գրանցման ժամանակը | Գործառնական որագրի գրանցման ժամանակը | Մուտք | Յելք | |
|---|---|---|---|---|
| | | Վճարված կուպոնների և պարտատոմսերի գումարը | Վոչնչացման ուղարկված վճարված կուպոնների և պարտատոմսերի գումարը | Չուղարկված կուպոնների և պարտատոմսերի գումարը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |



Գոյություն ունեցող № 109 ձևի փոխարեն, անձնական հաշիվները տարվում են № 23 ձևի մատյանում:

81. № 210 հաշվի № 1 յենթահաշվով № 23 ձևի մատյանում բացվում են 2 անձնական հաշիվներ՝ մեկ անձնական հաշիվը բոլոր փոխառությունների համար, բացառությամբ 8 տոկոսային փոխառության և 1929 թ. ներքին փոխառության (Արդյունաբերության փոխառություն), իսկ մյուս անձնական հաշիվը— 8 տոկոսային փոխառության և 1929 թ. ներքին փոխառության (արդյունաբերության փոխառության):

Կուպոնների և պարտատոմսերի հաշվառումը № 3 յենթահաշվով տարվում է № 108 ձևի մատյանում:

№ № 2 և 4 յենթահաշիվների շրջանառությունները հաշվառվում են որվա ընդհանուր գումարներով միայն № 25-ր ձևի մատյանում:

82. Որվա ընթացքում ամեն մի խնայողական դրամարկղի կողմից վճարած կուպոնների, պարտատոմսերի և մարման խաղարկությունների անցած պարտատոմսերի մասին որվա հաշվետվության հետ ստացվող № 54 ձևի ամփոփ որդերներն անց են կացվում № 24 հաշվի դեբետով և № 210 արտաբալանսային հաշվի մուտքով, յենթակա խնայողական դրամարկղների որդերները — № 2 յենթահաշվի մուտքով, իսկ պահեստարանի (կամ գործառնական մասի, յեթե ինքնուրույն պահեստարան չկա) № 1 յենթահաշվի մուտքով, գրանցելով № 23 ձևի մատյանի համապատասխան անձնական հաշիվներում:

83. Յենթակա խնայողական դրամարկղների կողմից վճարված կտրոնները, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը, վորպիսիք ուղարկված են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին, հաշվապահությունը № 61 ձևի որդերների հիման վրա՝ (բլանկ «Բ») յելք է դուրս գրում № 210 արտաբալանսային հաշվով, յենթահաշիվ № 2 և միաժամանակ մուտք է արվում այդ նույն հաշվով, յենթահաշիվ № 3 (գրանցելով №108 ձևի մատյանում— մուտքով):

Պահեստարանից (կամ գործառնության մասից) որվա հաշվետվության հետ ստացված № 61 ձևի որդերները (բլանկ «Ա»), վորոնք կազմվել են յենթակա խնայողական դրամարկղներից ընդունված վճարված կտրոնների և պարտատոմսերի համար՝ հաշվապահությունը անց է կացնում № 210 արտաբալանսային հաշվով № 3 յենթահաշվի յելքում: Որդերները գրանցվում են № 108 ձևի մատյանում (յելքում): Միաժամանակ № 108 ձևի մատյանում համապատասխան մուտքի հոդվածի դիմաց նշումն է արվում դուրս գրելու մասին (յելքի հոդվածի համարը):

№ 3 յենթահաշվով յելք դուրս գրելու հետ միաժամանակ՝ կտրոններն ու պարտատոմսերը մուտք են արվում նույն № 210 արտաբալանսային հաշվի № 1 յենթահաշվով գրանցելով № 23 մատյանի անձնական հաշվում:

№ 61 ձևի որդերների «Բ» և «Ա» բլանկների առաջին կողմում հաշվապահությունը նշում է՝ «մուտք անել № 210 հաշվով, յենթահաշիվ № 3» կամ՝ «Յելք դուրս գրել № 210 հաշվով, յենթահաշիվ № 3»: Որդերների գումարն այդ մակագրությամբ գրանցվում են հաշվապահության որագրում:

Վճարման վոչ յենթակա կտրոնների և պարտատոմսերի արժեքը,

պակասող կտրոնների և պարտատոմսերի գումարը, նաև պարտատոմսերի գերավճարումների գումարը հաշվապահությունը № 53 ձևի օրդերի (գործառնության մասի) հիման վրա ելք է դուրս գրում № 210 արտաբալանսային հաշվով, ենթահաշիվ № 1 և այդ օրդերի գումարը գրանցվում է № 23 ձևի մատյանում անձնական հաշվում։

Միաժամանակ՝ սխալ վճարված կտրոնների և պարտատոմսերի արժեքը (չշահած և մարման խաղարկությունով չանցած պարտատոմսերի, ժամանակից առաջ վճարված կտրոնների և պարտատոմսերի, չինծու, կեղծ և վճարելիության հատկանիշները կորցրած կտրոնների և պարտատոմսերի, կտրոնների և պարտատոմսեր, որոնց վճարման ժամկետն անցել է) հաշվեգրվում է № 54 օրդերով (գործառության մասի) № 230 արտաբալանսային հաշվի մուտքում (№ 108 ձևի մատյան)։

Կտրոնների և պարտատոմսերի համար սխալ և ավելորդ վճարված գումարները, նաև պակասող կտրոնների և պարտատոմսերի արժեքը հաշվապահությունը № 55 ձևի օրդերով (պահեստարանի կամ գործառնության մասի) գրանցում է № 24 հաշվի պահանջում և № 87 հաշվի պարտքում՝ վնասը մեղավորներից գանձելու համար։

Կտրոնների և պարտատոմսերի ավելցուկի գումարը հաշվապահությունը № 55 ձևի օրդերով գրանցում է № 24 հաշվի պարտքում №67 հաշվի պահանջում՝ միութենական բյուջեի եկամուտներում հաշվեգրելու համար (այլ մուտքեր)։

84. № 210 հաշվի № 23 ձևի մատյանում ամեն օր դուրս է բերվում մնացորդը, որը պետք է համընկնի կտրոնների և պարտատոմսերի այն մնացորդի հետ, որը ցույց է տրված պահեստարանի կամ գործառնության մասի կողմից №. 25—ա ձևի հավելվածում «վճարված տիրաժային արժեքներ» սյունակում «Մնում է» տողում։ Անձնական հաշիվներում դուրս են բերվում ամսվա հանրագումարները և աճող հանրագումարները տարվա սկզբից։

85. № 24 հաշվի դեբետի շրջանառությունը յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար պետք է հավասար լինի № 210 հաշվի № 1 և № 4 ենթահաշիվների մատյանի շրջանառությունների ընդհանուր գումարին՝ ավելացրած № 2 և № 3 ենթահաշիվներով առամսվա վերջին եղած մնացորդները և հանած այդ նույն № 2 և № 3 ենթահաշիվներով առ հաշվետու ամսվա սկզբին եղած մնացորդները։

Այս հավասարությունը կարող է խախտվել հետևյալ դեպքերում.

ա) № 95 ձևի տեղեկագրի դիմաց պահեստարանում հայտնաբերված չուղարկված կտրոններն ու պարտատոմսերը № 1 ենթահաշվում մուտք անելու ժամանակ, բ) պակասող վճարված կտրոններն ու պարտատոմսերը № 2 ենթահաշվով ելք դուրս գրելու ժամանակ գ) ճանապարհին կորցրած կտրոններն ու պարտատոմսերը № 3 ենթահաշվով ելք դուրս գրելու ժամանակ և դ) №24 հաշվի դեբետում կամ № 210 հաշվի մուտքում որևէ սխալ (ուղղիչ) գրանցումների առկայության դեպքում։

Ամսական շրջանառության տեղեկագրերի բացատրական նամակում հաշվապահությունը պետք է իր



վարչությանը ներկայացնի №№ 24 և 210 հաշիվների այն շրջանառությունների ցուցակը, որոնք խախտել են յերկու հաշիվների համապատասխանությունը, նշելով յուրաքանչյուր գրանցման ժամանակը, գումարը և բնույթը։

86. №№ 24 և 210 հաշիվների ճշտումը հեշտացնելու նպատակով՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը պարտավոր է ցուցակագրել այն բոլոր շրջանառությունները, որոնք խախտել են այդ հաշիվների փոխադարձ համապատասխանությունը, հատուկ տեղեկագրում հետևյալ ձևով՝

| Տեղեկագրի կազմման ժամանակը | № 24 հաշվի դեբետի ուղղիչ և սխալ շրջանառություններ | | № 210 Արտաբալանսային № 1 ենթահաշվի մուտքի ուղղիչ և սխալ շրջանառություններ | | Վճարված կուպոնների և պարտատոմսերի դուրս գրման շրջանառություններ (պակասող և կորցրած) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Տարին խնայդրամարկղներում 200/2 հաշվով | | Ճանապարհին № 210/3 հաշվով | |
| | Անվանական արժեքի մնացորդը | Գումար | Անվանական արժեքի մնացորդը | Գումար | Անվանական արժեքի ընդհանուր մնացորդը | Գումար | Անվանական արժեքի ընդհանուր մնացորդը | Գումար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |

87. № 210 հաշվի շրջանառությունների համապատասխանությունը № 24 հաշվի շրջանառությունների հետ ստուգվում է հետևյալ կարգով՝

№№ 210/1 և 210/4 ենթահաշիվների մուտքի շրջանառությունների գումարին պետք է ավելացնել՝

ա) №№ 210/2 և 210/3 ենթահաշիվների առ ամսվա վերջին եղած մնացորդները։

բ) №№ 210/2 և 210/3 ենթահաշիվների կորցրած, նաև պակասող կուպոնների և պարտատոմսերի արժեքը և

գ) № 24 հաշվի շրջանառությունների ուղղիչ և սխալ գումարը։

Ստացված գումարից պետք է հանել.

ա) №№ 210/2 և 210/3 ենթահաշիվների առ ամսվա սկզբին եղած մնացորդները և

բ) № 210 հաշվի (ենթահաշիվ №№ 1 և 4) ուղղիչ և սխալ շրջանառությունների գումարը։

№№ 24 և 210 հաշիվների շրջանառությունների ցուցակի հետ միասին, որոնք խախտել են այդ հաշիվների համապատասխանությունը, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը, ամսական շրջանառության տեղեկագիրն ուղարկելով իր վարչությանը՝ պարտավոր է ներկայացնելու № 24 հաշվի կրեդիտային շրջանառությունների քաղվածքը հաշվետու ամսվա համար, համապատասխան դեպքերում հիմնվելով մարված կուպոնների և պարտատոմսերի ստուգման և ոչնչացման հանձնաժողովի ակտերի վրա։

88. Մոսկվայի խորհրդի փոխառության և գյուղատնտեսության տրակտորիզացիայի ոժանդակող փոխառության վճարված շահած և

մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը հաշվապահությունը № 54 ձևի առանձին օրդերների հիման վրա, մուտք է անում «Մոսկվայի Խորհրդի վճարված շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը» № 221 արտաբալանսային հաշվում և «Գյուղատնտեսության տրակտորիզացիային օժանդակող փոխառության վճարված տիրաժային և շահած պարտատոմսեր» № 222 արտաբալանսային հաշվում: Այդ պարտատոմսերի վճարված գումարը գրանցվում է «Մոսկվայի Խորհրդի փոխառության Գյուղատնտեսության տրակտորիզացիային օժանդակող փոխառության շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարում» № 41 հաշվի դեբետում:

№ 41, № 221 և № 222 հաշիվների շրջանառությունները հաշվի յեն առնվում № 23 ձևի մատյանում, այդ փոխառություններից յուրաքանչյուրի համար բացվող անձնական հաշիվներում: Բացի վճարված գումարից՝ անձնական հաշիվներում առանձին սյունյակում նշվում է վճարված պարտատոմսերի անվանական արժեքը:

89. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի և նրան յենթակա 1-ին կարգի խնայողական դրամարկղների կողմից ընդունված կուպոններն ու պարտատոմսերը, վորոնք էքսպերտիզայի համար ուղարկվելու յեն պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը, հաշվապահությունը, № 54 ձևի օրդերների հիման վրա, հաշվի յեն առնում № 228 արտաբալանսային հաշվում:

№ 228 հաշվի շրջանառությունները հաշվի յեն առնվում № 113 ձևի մատյանում, հետևյալ ձևով՝

| Գրանցման ամսաթիվը | Մուտքի օրդերի № | Ցուցակի №-ը | ՄՈՒՏՔ | | | | ԳՈՒՄԱՐ | | | ԵԼՔ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | [illegible] | Փոխառ. տարին | Սերիայի համարը | Պարտատոմսի №-ը | Անվանական արժեքը | [illegible] | [illegible] | [illegible] | Գումարը | [illegible] |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |

№ 13 ձևի մատյանը տարվում է անձնական հաշիվներով՝ ա) էքսպերտիզայի համար ընդունված պարտատոմսեր և կուպոններ, և բ) պարտատոմսեր, վորոնք տրվելու յեն պարտատոմսատերերին՝ էքսպերտիզայի համար ուղարկված պարտատոմսերի փոխարեն:

90. 1-ին կարգի խնայողական դրամարկղների կողմից էքսպերտիզայի համար ընդունված պարտատոմսերն ու կուպոնները, վորոնք ուղարկված են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին, հաշվապահությունը № 61 ձևի օրդերի հիման վրա (բլանկ «Բ»), յելք է դուրս գրում № 228 արտաբալանսային հաշվով: № 61 ձևի օրդերի (բլանկ «Բ») առաջին կողմում գլխավոր հաշվապահը մակագրում է՝ «մուտք անել № 231 հաշվով»: Օրդերի գումարն այդ մակագրության հիման վրա գրանցվում է հաշվապահության որագրում և անց է կացվում № 231 հաշվի մուտքում (108 ձևի մատյան):



№ 61 ձևի օրդերները (բլանկ «Ա»), վոր ստացվել են պահեստարանի (կամ գործառնության մասի) որվա հաշվետվության հետ և կազմվել են յենթակա դրամարկղներից մուտք յեղած այն պարտատոմսերի և կտրոնների համար, վորոնք ընդունվել են էքսպերտիզայի համար. հաշվապահությունն անց է կացնում № 231 արտաբալանսային հաշվի յելքում (№ 108 ձևի մատյան). № 61 ձևի օրդերի (բլանկ «Ա»)՝ առաջին կողմում գլխավոր հաշվապահը մակագրում է՝ «Յելք դուրս գրել № 231 հաշվով»: Օրդերների գումարներն այդ մակագրություններով գրանցվում են հաշվապահության որագրում:

№ 231 արտաբալանսային հաշվով յելք դուրս գրելու հետ միաժամանակ՝, այդ պարտատոմսերն ու կուպոնները № 61 ձևի օրդերների (բլանկ «Ա») հիման վրա անց են կացվում № 228 արտաբալանսային հաշվի մուտքով և գրանցվում են № 113 ձևի մատյանում «Էքսպերտիզայի համար ընդունված պարտատոմսեր և կտրոններ» անձնական հաշվում:

91. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղների գործառնության մասի կողմից պարտատոմսատերերից անմիջականորեն ընդունված, նաև 1-ին կարգի խնայողական դրամարկղներից ստացված կուպոններն ու պարտատոմսերը, վոր պիտի էքսպերտիզայի համար ուղարկվեն պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը, № 53 ձևի օրդերների հիման վրա (գործառնության մասի), յելք է դուրս գրում № 228 արտաբալանսային հաշվով (№ 133 ձևի մատյան) և մուտք է անում № 231 արտաբալանսային հաշվում: № 53 ձևի օրդերի առաջին կողմում գլխավոր հաշվապահը մակագրում է՝ «մուտք անել № 231 հաշվով»: Օրդերի գումարը, այդ մակագրության հիման վրա, գրանցվում է հաշվապահության որագրում և № 108 ձևի մատյանում № 231 հաշվով:

Պարտատոմսերը յենթակա խնայողական դրամարկղների կողմից էքսպերտիզայի համար կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին և վերջինիս կողմից պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանն ուղարկելու արժեքը հաշվապահությունը գրանցում է № 129-ը հաշվի պարտքում:

92. Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության թույլավության հիման վրա այն մասին, վոր ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից պարտատոմսեր տրվեն էքսպերտիզայի համար ուղարկվածների փոխարեն, հաշվապահությունը № 53 ձևի օրդերով (գործառնության մասի) պարտատոմսատիրոջը տրվելու յենթակա պարտատոմսերը յելք է դուրս գրում № 205 հաշվից: № 106 ձևի մատյանի անձնական հաշիվներում (№ 205 հաշվով) այդ պարտատոմսերը յելք են ցույց տրվում «Ուղարկված է պետնիչ» սյունակում: № 205 հաշվից դուրս գրված պարտատոմսերը մուտք են արվում № 54 ձևի օրդերով (գործառնության մասի) № 228 հաշվում և հաշվի յեն առնվում № 113 մատյանում առանձին անձնական հաշվով («էքսպերտիզայի համար ուղարկվածների փոխարեն՝ տերերին տրվելու յենթակա պարտատոմսեր»):

Վերահսկիչի կողմից մարված պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության թույլավությունը ստորագրում են կենտրոնական (շրջանային) խնայողական դրամարկղի վարիչը և գլխավոր հաշվապահը:

Միաժամանակ՝ հաշվապահության կողմից կազմված № 53 ձևի օրդերով պարտատոմսերի կամ կտրոնների գումարը գրանցվում է հաշվա-

պահության որագրում և յելք է դուրս գրվում № 231 հաշվով:

Այն պարտատոմսերը, վորոնք իրենց տերերին հանձնելու համար պետք է ուղարկվեն ընթացիկ խնայողական դրամարկղներին, հաշվապահությունը № 228 արտաբալանսային հաշվով յելք է դուրս գրում № 61 ձևի որդերով (բլանկ «Բ»):

Այդ պարտատոմսերը, տերերին խնայողական դրամարկղներին ուղարկելու հետ միաժամանակ՝ հաշվապահությունը նույն № 61 ձևի որդերի հիման վրա (բլանկ «Բ»), հաշվեգրում է № 231 արտաբալանսային հաշվի մուտքում:

Խնայողական դրամարկղներից №61 ձևի որդերները («Ա» բլանկը) ստանալուց հետո՝ հաշվապահությունն այդ պարտատոմսերն անց է կացնում № 228 արտաբալանսային հաշվի մուտքում և գրանցում է այդպիսիք № 113 ձևի մատյանում («եքսպերտիզային ուղարկվածների փոխարեն տերերին տրվող պարտատոմսեր» անձնական հաշվում) յելք դուրս գրելով № 231 հաշվով:

№ 53 ձևի որդերներով (գործառնության մասի և ընթացիկ խնայողական դրամարկղների) տերերին տրված պարտատոմսերը յելք է դուրս գրվում № 228 հաշվից:

Տոկոսաբեր մասերի մաշված պարտատոմսերի փոխանակման ժամանակ պակասող կտրոնների համար գանձվող գումարը համաձայն № 53 ձևի որդերի գրանցվում է № 24 հաշվի պահանջում (№ 54 հաշվի պարտք):

93 Եքսպերտիզային ուղարկված շահած կամ մարման խաղարկությունով անցած պարտատոմսերի վճարման համար պետաշխնայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչությունից փոխադրություն (ձև № 10) ստանալու ժամանակ՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը պարտատոմսերի արժեք յելք է դուրս գրում № 231 հաշվով փոխադրության գումարը գրանցում է «փոխադրություն վճարելու համար» № 82 հաշվի պահանջում (№ 87 հաշվի պարտք) և փոխադրությունը վճարման համար համապատասխանաբար հանձնում է գործառնության մասի կամ 1-ին կարգի խնայողական դրամարկղին: Պարտատոմսերը № 231 հաշվից դուրս գրելու համար հաշվապահությունը դուրս է գրում № 53 ձևի որդեր՝ գրանցելով այդ որդերն իր որագրում № 231 հաշվի № 108 ձևի մատյանում:

94. Խնայողական դրամարկղների կողմից խլված կեղծ կամ չինծու պարտատոմսերն ու կտրոնները հաշվապահությունը № 54 ձևի որդերով հաշվեգրում է № 230 արտաբալանսային հաշվի մուտքում: Այդ կտրոններն ու պարտատոմսերը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղին ուղարկելու ժամանակ՝ հաշվապահությունը № 61 ձևի որդերի («Բ» բլանկի) հիման վրա՝ դուրս է գրում այդպիսիք № 230 հաշվից և մուտք է անում № 231 հաշվով: Խնայողական դրամարկղներից ստացված պարտատոմսերն ու կտրոնները հաշվապահությունը №61 ձևի որդերի («Ա» բլանկի) հիման վրա անց է կացնում № 231 արտաբալանսային հաշվի յելքում և հաշվեգրում է № 230 արտաբալանսային հաշվի մուտքում:

Միլիցիայի մարմիններին հանձնած պարտատոմսերն ու կտրոնները հաշվապահությունը, համաձայն № 53 ձևի որդերի, անցկացնում № 230 արտաբալանսային հաշվի յելքում:

95. Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությունից ծանուցում ստանալու դեպքում այն մասին, վոր կտրոններն ու պարտատոմսերն անվճարելի յեն ճանաչվել, հաշվապահությունը, ստացված ծանուցագրի հիման վրա, դուրս է գրում № 53 ձևի որդեր՝ անվճարելի ճանաչված արժեքների գումարը № 231 հաշվից յելք դուրս գրելու համար № 53 ձևի որդերի գումարը



գրանցվում է հաշվապահության որագրում:

96. Եքսպերտիզային ուղարկված պարտատոմսերի արժեքավոր ծրարը ճանապարհին կորչելու դեպքում՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը կազմում է ակտ յերկու որինակից՝ շարադրելով գործի բոլոր հանգամանքները: Ակտը ստորագրում են կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչն ու գլխավոր հաշվապահը:

Այդ ակտի հիման վրա՝ հաշվապահությունը կազմում է № 55 ձևի որդեր՝ պարտատոմսերի կորցրած ծրարի փոստային (ապահովագրական) գնահատման գումարը № 85 հաշվի պարտքում գրանցելու համար (վնասը հետագայում կապի հիմնարկությունից գանձելով) և № 83 հաշվի պահանջում—ի տնորինություն պարտատոմսատիրոջ: № 53 ձևի որդերի քաղվածքի հետ միաժամանակ՝ հաշվապահությունը կազմում է №53 ձևի որդեր՝ պարտատոմսերը № 231 արտաբալանսային հաշվից յելք դուրս գրելու համար:

Ակտի մեկ որինակն ուղարկվում է պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչությանը:

Ճանապարհին կորցրած պարտատոմսերի № 83 հաշվում հաշվեգրված գումարները վճարվում են տերերին՝ վնասը կապի հիմնարկությունից գանձելուց հետո: Կորցրած փոստային առաքումների գծով կապի հիմնարկություններին պահանջ ներկայացնելու համար սահմանված է վաղեմիության վեցամսյա ժամկետ՝ արժեքավոր ծրարն ուղարկելու որից: Վաղեմիության ժամկետն անցկացնելու համար նյութական պատասխանատվություն է կրում անձամբ գլխավոր հաշվապահը:

Պետաշխնայդրամարկղների և Պետվարկի վերադաս վարչության թույլտվությամբ տերերին հասնող գումարների վճարումը (№ 83 հաշվից) կարող է կատարվել մինչև վնասը կապի հիմնարկությունից գանձելը:

Այն դեպքերում, յերբ կորցրած պարտատոմսերի փոխարեն հաճախորդին տրվելու յեն ուրիշ պարտատոմսեր, ապա № 83 հաշվում գրանցված գումարները գործադրվում են ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից նոր տրվող համապատասխան փոխառության պարտատոմսերի վճարման համար:

97. Կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը գործառնության մասից և 1-ին կարգի խնայողական դրամարկղից ստացված № 99 ձևի ցուցակների վրա (հոդ. 36) նշում է եքսպերտիզայի համար ընդունված արժեքների շարժումը՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի պահեստարանին և վերջինիս կողմից Գլխավոր վարչությանն ուղարկելու դատան (նշելով փոստի անդորրագրի համարը), վճարելի ճանաչված պարտատոմսերի փոխարեն ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից պարտատոմսատերերին ուրիշ պարտատոմսեր տալու համար Գլխավոր վարչության թույլտվության ժամանակը և համարը, ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից փոխանցված և պարտատոմսատերերին տրվող պարտատոմսերի սերիաներն ու համարները, այդ պարտատոմսերը № 228 արտաբալանսային հաշվում հաշվեգրելու ժամանակը, պարտատոմսերը ընթացիկ խնայողական դրամարկղներին ուղարկելու և պարտատոմսերը տերերին հանձնելու ժամանակը, Գլխավոր վարչության՝ վճարելի ճանաչված պարտատոմսերի ծանուցման կամ պարտատոմսերն ու կտրոնները վճարելու համար № 10 ձևի փոխադրության ժամանակն ու համարը:

## IX. ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՂԱՐԿՎՈՂ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՑԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

98. Պահեստարանի կողմից կազմվող № 95 ձևի տեղեկագրերը, վորոնց հետ վճարված կտրոններն ու պարտատոմսերը ստուգման և վոչնչացման համար պետք է ուղարկվեն հանձնաժողովին՝ ստուգում է հաշվապահությունը։

№ 95 ձևի տեղեկագրի վճարված կտրոնների և պարտատոմսերի ընդհանուր գումարը պետք է հավասար լինի № 210 արտաբալանսային հաշվի № 1 ենթահաշվի՝ ըստ հաշվետու ամսվա հետևյալ ամսի 1-ն յեղած մնացորդին, նաև № 23 ձևի մատյանի անձնական հաշիվներում ցույց տրված մնացորդների գումարին և գործառնության մասին (կամ պահեստարանի) № 25—ա ձևի հավելվածի «վճարված տիրաժային արժեքներ» սունյակի մնացորդին։

№ 95 ձևի տեղեկագրի 3 որինակներից առաջինը գրվում է արժեքներով ծանրոցի մեջ, յերկրորդը—հաշվապահությունը առանձին պատվիրված նամակով ուղարկում է մարված կտրոնները ու պարտատոմսերը ստուգող և վոչնչացնող հանձնաժողովին, իսկ յերրորդ որինակը պահվում է գլխավոր հաշվապահի մոտ՝ առանձին թղթապանակում։

Պատվիրված նամակով ուղարկվող տեղեկագրերի, նաև գլխավոր հաշվապահի մոտ պահելու համար մնացող տեղեկագրերի վրա նշվում է կտրոնների և պարտատոմսերի առաքման ժամանակը և փոստի անդորրագրի համարը։

99. Գործառնության մասին (պահեստարանի) որպես հաշվետվության հետ № 53 ձևի որդերներն ստանալուն պես, վորոնք կազմվել են կտրոններն ու պարտատոմսերը ստուգման և վոչնչացման համար հանձնաժողովին ուղարկելու առթիվ, հաշվապահությունն այդպիսիք, յերբ է դուրս գրում № 210 հաշվի № 1 ենթահաշվով։ Ուղարկված կտրոններն ու պարտատոմսերը միաժամանակ մուտք են արվում «վոչնչացման համար ուղարկված տիրաժային արժեքներ» № 214 հաշվով։ Կտրոնների և պարտատոմսերի հաշվառումը № 214 հաշվով տարվում է № 108 ձևի առանձին մատյանում։

Ուղարկված կտրոններն ու պարտատոմսերը № 214 հաշվում մուտք անելու համար՝ հաշվապահությունը № 53 ձևի որդերների վրա մակագրում է՝ «հաշվեգրել № 214 հաշվում»։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Այն կենտրոնական խնայողական դրամարկղները, վորոնք հանձնաժողովների հետ գտնվում են միևնույն քաղաքում, ստուգման և վոչնչացման համար հանձնաժողովին հանձնված կտրոններն ու պարտատոմսերը նույնպես հաշվեգրում են № 214 հաշվում։

100. Մարված կտրոններն ու պարտատոմսերը ստուգող և վոչնչացնող հանձնաժողովի ակտը և այդ ակտի № 95—ա ձևի հավելվածն ստանալուն պես՝ № 95 տեղեկագրում նշված կտրոնների և պարտատոմսերի ընդհանուր գումարը, անկախ կտրոններն ու պարտատոմսերը հանձնաժողովի կողմից ստուգելու արդյունքներից՝ յելք է դուրս գրվում № 214 հաշվից՝ հաշվապահության կողմից կազմվող № 53 ձևի որդերով։

Այդ որդերի գումարը գրանցվում է հաշվապահության գործառնության որագրում։

101. Ուղարկված կտրոններն ու պարտատոմսերը հանձնաժողովի կողմից ստուգելու և վոչնչացնելու արդյունքները հաշվապահությունը հաշվի յե առնում յուրաքանչյուր փոխառության համար առանձին հետևյալ ձևի անձնական հաշիվներում։

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Գրանցման ժամանակը | | |
| 2 | № 95 ձևի տեղեկագրի հերթական համարը | | |
| 3 | Հանձնաժողովի ակտի դատան և համարը | | |
| 4 | Կտրոններ (№ 95 ձևի տեղեկագրերի գումարը պլյուս 7 սունյակը, մինուս 10, 13, 16 և 20 սունյակները | | [illegible] |
| 5 | Անվանական արժեքը № 95 ձևի տեղեկագրի գումարը պլյուս 8 սունյակը մինուս 11, 14, 17 և 21 սունյակները) | պարտատոմսեր | |
| 6 | Գումարը շահումի հետ միասին (№ 95 տեղեկագ. գումարը պլյուս 9 սունյակը մինուս 12, 15, 18, 19 և 22 սունյակ) | | |
| 7 | Կ ո ւ պ ո ն ն ե ր | | [illegible] |
| 8 | Անվանական արժեքը | պարտատոմսեր | |
| 9 | Գումարը շահումի հետ միասին | | |
| 10 | Կ ո ւ պ ո ն ն ե ր | | [illegible] |
| 11 | Անվանական արժեքը | պարտատոմսեր | |
| 12 | Գումարը շահումի հետ միասին | | |
| 13 | Կ ո ւ պ ո ն ն ե ր | | [illegible] |
| 14 | Անվանական արժեքը | պարտատոմսեր | |
| 15 | Գումար շահումի հետ միասին | | |
| 16 | Կ ո ւ պ ո ն ն ե ր | | Կեղծ, չինծու և վճարելիությունն համապատասխանող կտրոնները |
| 17 | Անվանական արժեքը | պարտատոմսեր | |
| 18 | Գումարը շահումի հետ միասին | | |
| 19 | Պարտատոմսերի շահումների ավելորդ վճարված գումարներ | | |
| 20 | Կ ո ւ պ ո ն ն ե ր | | Ցուցակում չկան |
| 21 | Անվանական արժեքը | պարտատոմսեր | |
| 22 | Գումարը շահումի հետ միասին | | |

Կտրոնների և պարտատոմսերի ստուգման արդյունքների տվյալները հաշվապահությունը գրանցում է անձնական հաշիվներում Հանձնաժողովի № 95 ձևի ակտերի և նրանց № 95—ա ձևի հավելվածների հիման վրա, միաժամանակ արժեքները դուրս գրելով № 214 հաշվից: Հանձնաժողովի յուրաքանչյուր ակտի ստուգման արդյունքները անձնական հաշիվներում 4—22 սունյակներում գրանցելուց հետո՝ դուրս են բերվում աճող հանրագումարները տարվա սկզբից:

102. Յեթե հանձնաժողովը հայտնաբերել է ավելորդ կուպոններ և պարտատոմսեր, իսկ պահեստարանի ստուգման ժամանակ հայտնաբերվել է այդ կուպոնների պարտատոմսերի պակասորդ, ապա ավելորդ ուղարկված կտրոնների և պարտատոմսերի գումարը հաշվապահությունը № 53 ձևի որդերով (գործառնության մասի) յելք է դուրս գրում № 210 հաշվից, յենթահաշիվ № 1: Այդ գումարը միաժամանակ անց է կացվում № 214 հաշվի մուտքում և յելքում:

Յեթե հանձնաժողովը հայտնաբերել է ավելորդ կուպոններ և պարտատոմսեր, իսկ պահեստարանի ստուգման ժամանակ չի հայտնաբերվել այդ կուպոնների պարտատոմսերի պակասորդ, ապա հաշվապահությունը Հանձնաժողովին ավելորդ ուղարկված կտրոններն ու պարտատոմսերը № 54 ձևի որդերով մուտք է անում № 210 հաշվում, յենթահաշիվ № 1: Կտրոնների և պարտատոմսերի ավելցուկների գումարը հաշվապահությունը № 55 ձևի որդերով գրանցում է № 24 հաշվի պարտքում և № 67 հաշվի պահանջում՝ այդ գումարը միութենական բյուջեի յեկամուտում փոխանցելու համար, վորպես այլ մուտքեր: Միաժամանակ հաշվապահությունը կուպոններն ու պարտատոմսերը յելք է դուրս գրում № 210 հաշվով, յենթահաշիվ № 1 (գործառնության մասին № 53 ձևի որդերով) և այդ գումարն անցկացնում № 214 հաշվի մուտքում և յելքում:

103. Վերստուգման կողմից պահեստարանում հայտնաբերված լրիվ չուղարկված կուպոններն ու պարտատոմսերը, վորպիսիք նշված են № 95 ձևի ակտի № 95—ա ձևի հավելվածում, վորպես պակասորդներ, մուտք են արվում № 210 հաշվում, յենթահաշիվ № 1 (գործառնության մասի № 54 ձևի որդերով):

Հանձնաժողովի կողմից հայտնաբերված կուպոնների և պարտատոմսերի պակասորդի գումարով, յեթե պահեստարանի ստուգման ժամանակ չեն յերևացել այդ նույն գումարի կուպոնների և պարտատոմսերի ավելցուկներ, հաշվապահությունը գործառնության մասին № 55 ձևի որդերով պարտագրում է № 87 հաշիվը (մեղավոր գանձապահից գանձելու համար) և պահանջագրում է № 24 հաշիվը:

104. Հանձնաժողովի կողմից վերադարձրած՝ ժամկետից առաջ վճարված կուպոններն ու պարտատոմսերը, նաև չշահած և մարման խաղարկությունով չանցած պարտատոմսերը մուտք են արվում № 54 ձևի որդերով (գործառնության մասի) № 230 հաշվում անվանական արժեքով: Եքսպերտիզայի ուղարկելու յենթակա կուպոններում պարտատոմսերը (կեղծված, չինծու կամ իրենց վճարելության մեջ կասկածներ հարուցող) մուտք են արվում № 230 հաշվում նրանցով վճարված գումարով: Հանձնաժողովի կողմից վերադարձրած կուպոններով և պարտատոմսերով վճարված գումարը № 55 ձևի որդերով (գործառնության մասի) գրանցվում է № 24 հաշվի պահանջում և № 87 հաշվի պարտքում՝ յեղած աշխատակիցներից գանձելու համար:

105. № 230 հաշվով մուտք արված ժամկետից առաջ վճարված կտրոնները, շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերը գրանցվում են № 108 մատյանում:



Հաշվապահությունը մատյանում արված գրանցումների հիման վրա, հետևում է կուպոնների վճարման ժամկետների լրանալուն և պարտատոմսերի համարները ստուգում է շահումների կամ մարման խաղարկությունների աղյուսակով:

Վճարան ժամկետը հասնելուն պես՝ կուպոններն ու պարտատոմսերը դուրս են գրվում № 230 հաշվից և մուտք են արվում № 210 հաշվում (յենթահաշվում № 1) փաստորեն վճարված գումարով: Վճարման գումարը հաշվեգրվում է № 24 հաշվի պարտքում և № 83 հաշվի պահանջում: Այդ գրանցումները հաշվապահությունն անում է գործառնության մասի վերահսկիչի կողմից կազմվող № № 53, 54 և 55 ձևերի որդերների հիման վրա:

№ 83 հաշվում հաշվեգրված գումարից, առաջին հերթին մարվում է այդ պարտատոմսերի վճարման գործում մեղավոր աշխատակցի պարտքի մնացորդն ամբողջովին (№ 55 ձևի որդերով № 83 հաշվի պարտքով և № 87 հաշվի պահանջով), աշխատակցին վերադարձվում են ի հատուցումն փոխառության՝ նրանից պահված գումարները (№ 54 ձևի որդերով № 83 հաշվի պարտքով և № 54 հաշվի պահանջով): № 83 հաշվում հաշվեգրված գումարի մնացորդը Պետբանկի միջոցով փոխանցվում է միութենական բյուջեն, վորպես պատահական մուտքեր (№ 55 ձևի որդեր № 83 հաշվի պարտքով և № 67 հաշվի պահանջով):

106. Այն դեպքերում, յերբ պարտատոմսերով սխալ վճարված գումարները մեղավորները հատուցել են № 230 հաշվում պահվող պարտատոմսերի վճարման ժամկետը հասնելուց առաջ, ապա նման պարտատոմսերը գլխավոր հաշվապահի կարգադրությամբ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչի ստորագրությամբ № 53 ձևի որդերով (գործառնության մասի) դուրս են գրվում № 230 հաշվից: Այդ պարտատոմսերի հաշվեգրումը ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյում և ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյից նույն փոխառությունների ուրիշ պարտատոմսեր տալն այն աշխատակիցներին, վորոնք մարել են սխալ վճարված գումարը կատարում է գործառնության մասը՝ առանց որդերներով ձևակերպելու (հրահանգի 72 հոդ):

107. Հանձնաժողովի կողմից վերադարձրած 1929 թ., 1930 թ., 1932 թ. և 1935 թ. պետական ներքին շահող փոխառությունների, նաև 1938 թ. շահող փոխառության սխալ վճարված (չշահած) պարտատոմսերով հաշվապահությունը, գործառնության մասի կողմից կազմվող № 55 ձևի որդերների հիման վրա, սխալ վճարված գումարները գրանցում է № 24 հաշվի պահանջում և հետևյալ հաշիվների պարտքում՝

ա) № 87 հաշվի—գանձման յենթակա գումարով,

բ) № 22 հաշվի—ԽՍՀՄ-ի ՖԺԿ-ի դեպոյի համար գնվող պարտատոմսերի արժեքի գումարով:

Պարտատոմսերի անվանական արժեքը № 53 ձևի որդերով յելք է դուրս գրվում № 230 հաշվից և մուտք է արվում № 54 ձևի որդերով № 205 հաշվում, գրանցելով № 106 ձևի մատյանի անձնական հաշիվներում «գնված է» տողում:

108. Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության № 10 ձևի փոխադրությունն ստանալուն պես, վորը կազմվում է Գլխավոր վարչության եքսպերտիզայի կողմից վճարելի ճանաչված պարտատոմսերի և կտրոնների արժեքով, կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը փոխադրության գումարը հաշվեգրում է № 83 հաշվի պահանջում № 97 հաշվի պարտք) և աշխատակցի հետ հաշվարկում է կատարում այս հրահանգի 105 հոդվածում նշված կարգով:

Պետաշխինայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության կողմից անվճարելի ճանաչված կուպոններով և պարտատոմսերով այն գումարը, վորպիսին գրանցված է № 87 հաշվում, դանձվում է մեղավորներից ամբողջությամբ։

Այդ պարտատոմսերի և կուպոնների արժեքը № 231 հաշվից դուրս է գրվում № 53 ձևի որդերով։

109. Շահած և մարման խաղարկությունով անցած պարտատոմսերով ավելորդ վճարված գումարները, նաև վճարված, բայց հանձնաժողովի վորոշմամբ ժամկետանց և անվճարելի ճանաչված կուպոնների և պարտատոմսերի արժեքը, համաձայն № 95 ձևի ակտի № 95—ա ձևի հավելվածի, № 55 ձևի որդերով (գործառնության մասի) գրանցվում է № 24 հաշվի պահանջում և № 87 հաշվի պարտքում և ամբողջությամբ դանձվում է մեղավորներից։

110. Ստուգման և վոչնչացման համար հանձնաժողովին ուղարկվող Մոսկվայի Խորհրդի փոխառության և Գյուղատնտեսության տրակտորիզացիային ուժանդակող փոխառության վճարված պարտատոմսերը հաշվապահությունը, գործառնության մասի № 53 ձևի որդերների հիման վրա, յելք է դուրս գրում № 221 կամ 222 հաշվով համապատասխանաբար։ Միաժամանակ պարտատոմսերը մուտք են արվում «վոչընչացման համար ուղարկված տիրաժային արժեքներ» № 214 հաշվում, գրանցելով № 108 ձևի մատյանում։

111. Մոսկվայի խորհրդի փոխառության և Գյուղատնտեսության տրակտորիզացիային ուժանդակող փոխառության պարտատոմսերի վոչնչացման մասին № 95 ձևի ակտը և նրա № 95—ա ձևի հավելվածն ստանալուն պես, հաշվապահությունը կազմում է № 53 ձևի որդեր և պարտատոմսերը յելք է դուրս գրում № 214 հաշվով։ Ճիշտ վճարված և վոչնչացված պարտատոմսերի արժեքը հաշվապահությունը միաժամանակ անց է կացնում № 41 հաշվի պահանջում և այդ գումարները հաշվեգրում է № 97 հաշվի պարտքում № 55 ձևի որդերով։ Պետաշխինայդրամարկղների և պետվարկի իր վարչությանն ուղարկվող որդերի հետ միասին՝ հաշվապահությունը պարտավոր է ներկայացնել հանձնաժողովի կողմից ստորագրված № 95 ձևի ակտի օրինակը՝ պարտատոմսերի վոչնչացման մասին։

112. Յեթե հանձնաժողովը հայտնաբերել է Մոսկվայի խորհրդի փոխառության և Գյուղատնտեսության տրակտորիզացիային ուժանդակող փոխառության պարտատոմսերի պակասորդ, ապա պակասող պարտատոմսերի արժեքով հաշվապահությունը դուրս է գրում № 55 ձևի որդեր՝ այդ գումարը № 87 հաշվի պարտքում և № 41 հաշվի պահանջում հաշվեգրելու համար։

Հանձնաժողովի կողմից վերադարձրած Մոսկվայի Խորհրդի սխալ վճարված (չշահած) պարտատոմսերը անվանական արժեքով № 54 ձևի որդերով (գործառնության մաս) հաշվապահությունը մուտք է անում № 221 հաշվում, իսկ Գյուղատընտեսության տրակտորիզացիային ուժանդակող փոխառության պարտատոմսերը— № 222 հաշվում։ Այդ պարտատոմսերով սխալ վճարված շահումների գումարը № 55 ձևի որդերով (գործառնության մաս( հաշվեգրվում է № 87 հաշվի պարտքում և № 41 հաշվի պահանջում։

№ 221 և № 222 հաշիվներում հաշվեգրված Մոսկվայի խորհրդի փոխառության և գյուղատնտեսության տրակտորիզացիային ուժանդակող փոխառության պարտատոմսերը պետք է վոչնչացման համար ուղարկվեն հանձնաժողովին ընդհանուր կարգով՝ վորպես վճարված պարտատոմսեր։ № 95 ձևի տեղեկագրում նման պարտատոմսերը ցույց են տրվում իրենց անվանական արժեքով։

113. Պետական փոխառությունների վճարված կտրոնների և պարտատոմսերի, նաև Մոսկվայի խորհրդի փոխառության և Գյուղատնտեսության տրակտորիզացիային ուժանդակող փոխառության վճարված պարտատոմսերի ծանրոցը ճանապարհին կորցնելու դեպքում՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղը կազմում է ակտ յերկու օրինակից՝ շարադրելով գործի բոլոր հանգամանքները։ Ակտն ստորագրում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի վարիչը և գլխավոր հաշվապահը։

Ակտի մեկ օրինակը կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղն ուղարկում է պետաշխինայդրամարկղների և պետվարկի վերադաս վարչությանը, վորը պարտավոր է ակտն ստանալուն պես ծանրոցը կորցնելու գործն անմիջապես հանձնել քննչական մարմիններին՝ քննության և մեղավորներին հայտնաբերելու համար։

Ակտի յերկրորդ օրինակի հիման վրա՝ կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը կազմում է № 55 ձևի որդեր՝ կորցրած ծանրոցի փոստային (ապահովագրական) գնահատման գումարը № 85 հաշվի դեբետում գրանցելու համար (այդ գումարը հետագայում կապի հիմնարկությունից գանձելու նպատակով) և № 126 հաշվի պահանջումը։

№ 210/3 կամ № 214 հաշիվներից այդ արժեքները դուրս գրելը կատարում է կենտրոնական կամ շրջանային խնայողական դրամարկղի հաշվապահությունը № 53 ձևի որդերով՝ միայն Գլխավոր վարչության թույլտվությամբ, վորին խնայդրամարկղների համապատասխան վարչությունը պարտավոր է ներկայացնել ծանրոցը կորցնելու ակտը և քննության նյութերը։

***

Այս հրահանգը հրատարակելուց հետո վերացվում են՝

ա) «պետական փոխառությունների գործառնությունների ձեռնարկի» № 111 1933 թ. (սխեմա բ_34) I, II, III, IV, V, XIII, XIV, XV, XVI, XVII, XVIII հոդվածները։

բ) «Պետական փոխառությունների գործառնությունների ձեռնարկի» № 115 1933 թ. (սխեմա Ա—73) XII, XIII, XIV, XVIII, XIX, XX, XXI, XXIV հոդվածները։

գ) Պետաշխինայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչության 8 փետրվարի, 1934 թ. № 14-րդ շրջաբերականը՝ «Տիրաժային և շահած պարտատոմսերի մարման մասին և ուղարկելու ժամանակ այդպիսինների ապահովագրական գնահատման մասին»։

դ) Պետաշխինայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 10 հոկտեմբերի, 1935 թ. № 66 շրջաբերականը՝ «Տրիկոտաժային աղյուսակների և նրանց պահպանման ու տարածման կարգի մասին»։

ե) Պետաշխինայդրամարկղների և պետվարկի գլխավոր վարչության 22 հոկտեմբերի, 1935 թ. № 73 շրջաբերականը «պետփոխառությունների կտրոնների, շահումների և տիրաժային պարտատոմսերի վճարման կարգի մեջ փոփոխություններ մտցնելու մասին»։

զ) Պետաշխինայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 17 հոկտեմբերի 1935 թ. № 81 շրջաբերականը՝ «Էքսպերտիզայի և վերստուգման համար Պետնիշ ուղարկելու համար պարտատոմսերն (կասկածելի, հնամաշ և խոշոր շահումներով) ընդունելու կարգի փոփոխման մասին»։

է) Պետաշխինայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 26 մայիսի 1936 թ. № 23 շրջաբերականը՝ «Պետական փոխառությունների պարտատոմսերը էքսպերտիզայի և վերստուգման համար ընդունելու և Պետնիշ ուղարկելու գործառ-

նությունները ձևակերպելու խնայդրամարկղների աշխատանքները բարելավելու մասին»։

թ) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1936 թ. 4 օգոստոսի, № 34 շրջաբերականը՝ «Պետփոխառությունների պարտատոմսերի վճարելիության հատկանիշների մասին»։

ժ) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1936 թ. 15 հոկտեմբերի, № 43 շրջաբերականը՝ «Խոշոր շահումների և դեֆեկտավոր պարտատոմսերի շահումների վճարման փոխադրությունները կազմելու մասին»։

ի) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1936 թ. 15 դեկտեմբերի № 50 շրջաբերականը՝ «Գլխավոր վարչության էքսպերտիզայի կողմից նախկին փոխառությունների վճարելի ճանաչված դեֆեկտավոր պարտատոմսերը փոխանակելու կարգի մասին»։

լ) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1937 թ. հունիսի 1-ի № 27 շրջաբերականը՝ «Երկրորդ հնգամյակի (չորրորդ տարվա) փոխառության հնամաշ և դեֆեկտավոր պարտատոմսերը, վորպիսիք գլխավոր վարչության կողմից ճանաչվել են վճարելի, այդ նույն փոխառության պարտատոմսերով փոխանակելու կարգի մասին»։

խ) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1937 թ. 4 օգոստոսի № 35 շրջաբերականը՝ «Պետական փոխառությունների պարտատոմսերը էքսպերտիզային ուղարկելու աշխատանքները կենտրոնական և շրջանային խնայողական դրամարկղներում կարգավորելու մասին»։

ծ) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1937 թ. 11 օգոստոսի № 37 շրջաբերականը՝ «Այն պարտատոմսերը հետագա էքսպերտիզայի և վոչնչացման համար Գլխավոր վարչությանն ուղարկելու մասին, վորոնց ընկել են 1000 ռ. շահումներ»։

կ) Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության 1938 թ. մարտի 28-ի շրջաբերականը՝ «Պետական փոխառությունների կտրոնների և պարտատոմսերի մարման կարգի մասին»։

Պետաշխնայդրամարկղների և պետվարկի Գլխավոր վարչության պետ՝ ՍՈԼԻՆ

Պետական փոխառությունների բաժնի պետի տեղակալ՝ ՍՈՐԿԻՆ

Գլխավոր հաշվապահ՝ ՄԻՏԻՆ



Հավելված № 1

# ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԽՍՀ Միության Գերագույն դատարանի 53-րդ պլենումի
2 հունվարի, 1936 թ.

## ԽԱԲԵԲԱՅՈՒԹՅԱՄԲ ՇԱՀՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ ԿԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՅԵՂԱԾ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ ՎՈՐԱԿԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ

Խաբեբայությամբ շահումներ ստանալու նպատակով պետական փոխառությունների պարտատոմսերի սերիաների համարները կեղծելու մասին յեղած գործերով ճիշտ և միատեսակ վորակավորում և պատժիչ քաղաքականություն սահմանելու նպատակներով՝ ԽՍՀՄ Գերագույն դատարանի պլենումը պարզաբանում է՝

1. Շահումներ ստանալու նպատակով պետփոխառությունների պարտատոմսերի համարների կեղծումը, յեթե այդ կատարվում է կազմակերպված շայկայի կամ թեկուզ առանձին անձերի կողմից, բայց վորպես արհեստագործություն, յենթակա յե վորակավորման ՌԽՖՍՀ Ք. Ո. 59—8 հոդ. և միյուս միութենական հանրապետությունների Ք. Ո. համապատասխան հոդվածներով։

2. Պարտատոմսերի կեղծման առանձին դեպքերը, վորոնք կատարվել են վորպես արհեստագործություն, յենթակա յեն վորակավորման ՌԽՖՍՀ Ք. Ո. 169 հոդ. 2-րդ մասով և միյուս միութենական հանրապետությունների Ք. Ո. համապատասխան հոդվածներով։

3. 2-րդ կետում նշված հանցագործության համար պետք է պատիժ վորոշել աքսորելով յերկու տարուց վոչ պակաս։

Հավելված 2

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ՆԵՐԿԱՅՑԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՅԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈՄՍԵՐԸ ԲԱՐԵԽՂՃՈՐԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. ԽՍՀՄ-ի սահմաններում շրջանառության համար թույլ տրված պետական և այլ ներկայչական արժեթղթերը, վորպիսիք ունեն վորոշ

դրամական գումարի վճարման պարտավորություն, հավասարապես և բանկային տոմսերը, չեն կարող պահանջվել բարեխիղճ ձեռք բերողից այն հիման վրա, վոր նրանք առաջներում յեղել են կորած, հափշտակված կամ պատկանել են պետական հիմնարկության կամ ձեռնարկության և անօրինական կերպով օտարացվել են վորևե յեղանակով:

2. Առաջարկել միութենական հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին, համապատասխան փոփոխություններ մտցնել քաղաքացիական որենսգրքում:

Մոսկվա, Կրեմլ,
16 հունվարի, 1925 թ.
(ԽՍՀՄ-ի Ո. Ժ. 1925 թ. № 4 հոդ. 42):

Հավելված № 3

Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի շրջաբերականը
30 ապրիլի, 1925 թ. № 88

## ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ՝ ՀԱՓՇՏԱԿՎԱԾ ՆԵՐԿԱՅՉԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՅԵՎ ԱՅԴՊԻՍԻՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԻՆ ՁԵՐԲԱԿԱԼԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՈՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ ԿԳԿ-ի ս. թ. 16-ն հունվարի վորոշմամբ— («ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ՀԿԳԿ-ի Իզվեստիա», 1-ն փետրվարի, № 26) սահմանված է, վոր բարեխղճորեն ձեռք բերողներից ներկայչական արժեթղթեր և բանկային տոմսեր պահանջելը չի թույլատրվում, թեկուզ և նրանք առաջներում կորած լինեն, հափշտակված կամ պատկանած լինեյին պետական հիմնարկությանը կամ ձեռնարկությանը:

Մինչդեռ ներկայչական արժեթղթերի հափշտակման դեպքերում, հետաքննության և քննության մարմինների կողմից հաղորդագրություններ են ուղղվում մի քանի բանկային հիմնարկություններին՝ պահանջելով ձերբակալել հիշյալ թղթերը և նույն իսկ արգելափակել ներկայացնողներին:

Նման գործողություններով, անպայման, խախտվում են փողային շրջանառության շահերը, վորովհետև նույնիսկ նման արժեթղթի բարեխիղճ տիրոջ կամ հենց արժեթղթի ձերբակալման յեղակի դեպքերը կարող են խիստ կերպով իջեցնել բնակչության հետաքրքրությունը՝ դեպի այդ արժեթղթերի ձեռք բերումը: Նման ձերբակալման կարգադրությունը գործնական արդյունքներ չեն կարող տալ, վորովհետև հափշտակողները նշված արժեքները կարող են վաճառահանել ուրիշ քաղաքներում, իսկ հայտնել Միության, բոլոր առանց բացառության բանկային հիմնարկություններին, առանձնապես կարճ ժամանակի ընթացքում, հնարավոր չէ:

Նկատի ունենալով վերոհիշյալը Արդժողկոմատը առաջարկում է հետաքննություն և քննություն կատարելու ժամանակ՝ պետբանկի և Ֆինժողկոմատի հիմնարկություններին նշված պահանջներ չներկայացնելը:



Հավելված № 4

ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումը

## Ի ՊԱՀ ՏՐՎՈՂ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՅԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՎԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ԿՈՐՑՐԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՉԱԿԱՆ ԱՆԴՈՐՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում են՝

1. Ի պահ տրվող ավանդների և արժեթղթերի գրավի համար վարկային հիմնարկությունների կողմից տրվող կորցրած ներկայչական անդորրագրերով իրավունքներ վերականգնելը կարող է տեղի ունենալ միայն այդ մասին դատարանի վորոշմամբ՝ կորցրած ներկայչական փաստաթղթերով իրավունքներ վերականգնելու մասին յեղած գործերի հատուկ դատավորության կարգով (вызывное производство):

2. Անդորրագրի ունեցողի դատարան ներկայանալու համար սահմանել մեկ տարվա ժամկետ, վորը հաշվել անդորրագիր կորցնելու մասին դատարանին տրված դիմումը հայտարարելու որից:

3. Առաջարկել միութենական հանրապետությունների կառավարություններին՝ հանրապետությունների որենսդրությունը մեկ ամսվա ժամկետում դարձնել այս վորոշման համապատասխան:

Մոսկվա, Կրեմլ,
14 հունիսի, 1929 թ.
(ԽՍՀՄ-ի Ո. Ժ. № 39, հոդ. 344)

Հավելված № 5

ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանի 48-րդ պլենումի վորոշումը
17 մայ. 1934 թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՑՐԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՅԵՎ ՄՅՈՒՍ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ „Вызывное" ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Դատական պրակտիկայում տեղի յեն ունենում պետական փոխառությունների կորցրած պարտատոմսերի և մյուս արժեթղթերի նկատմամբ «вызывное» դատավորության կանոնները կիրառելու դեպքեր:

ԽՍՀՄ-ի Գերագույն դատարանը պարզաբանում է միութենական հանրապետությունների գերագույն դատարաններին:

Դատավարությունը կարող է կիրառվել միայն ներկայչական փաստաթղթերի այն տեսակների նկատմամբ, վորոնց վրա այդ կարգը տարածվում է հատուկ որենսդրությամբ (ՌԽՖՍՀ Քաղ. ԴՈ 234 հոդ. և մյուս միութենական հանրապետությունների Քաղ. ԴՈ համապատասխան հոդվածները):

ԽՍՀՄ-ի և ՌԽՖՍՀ որենսդրությամբ մինչև այժմ սահմանված են ներկայչական փաստաթղթերի հետևյալ տեսակները, վորոնց նկատմամբ՝ այդպիսիք կորցնելու դեպքում՝ կարող է տեղի ունենալ «вызывное» դատավորություն՝ ավանդային կամ գրավադրման վկայականներ, անդորրագրեր կամ գրքույկներ ավանդի

*կամ արժեթղթերի գրավի մասին կամ ուրիշ արժեքներ վարկային հիմնարկություններում, պետաչխ-խնայդրամարկղներում կամ վարկա-յին-կոոպերատիվ կազմակերպու-թյուններում* (*ԽՍՀՄ-ի Ո. Ժ.* 1929 *թ.* № 17, *հոդ.* 140, *նրա մեջ հոդ.* 28, *մ.* 2: *ԽՍՀՄ-ի Ո. Ժ.* 1939 *թ.* № 39, *հոդ.* 344 *Ո. Ժ.* 1927 *թ.* № 121, *հոդ.* 819):

*Նկատի ունենալով այդ* «вызывное» *դատավարության կարգի տարածումը ներկայչական փաստաթղթերի այլ տեսակների վրա, նույն թվում պետ-փոխառությունների պարտատոմսե-րի, սերտիֆիկատների և այլնի վրա, այնքան, վորքան այդ հատուկ դա-տավարությունը նրանց վրա օրենքով չի տարածվում, տեղի ունենալ չի կարող:*

(«*Խորհրդային արդարադատու-թյուն*» 1934 *թ.* № 26, *էջ* 23):

ԳՐԱԴԱՐԱՆ



Պատ. խմբագիր՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Թարգմ. և կոնտրոլ սրբագրիչ՝
Գ. ԳՆՎՈՐԳՅԱՆ
Տեխ. խմբ. և սրբագրիչ՝ Վ. ՄԵՍՅԱՆՑԱՆ

Գլավլիտի լիազոր՝ Ղ— 8740 տիրաժ 1000 Պատվ. № 444.

Հայկական ԽՍՀ ԺԿԽ հրատարակչ. «Խորհրդային Հայաստան»-ի տպարան, Ցերևան.

20.

ՀՀ Ազգային գրադարան
NL0927968

II
28344